
ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ ԵՎ
ԸՆԹԱՑՔՈՒՄ ՌՈՒՍ-ԹՈՒՐԳԱԿԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏՈՒՄ
ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1914–1917 ԹԹ.)

ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ

Ուսումնասիրողների շրջանում 1990-ական թվականներից սկսած շարունակում է աճել հետաքրքրությունը Առաջին համաշխարհային պատերազմի նկատմամբ: Պատմաբանները գլխավորապես ուսումնասիրում են Եվրոպայում ընթացող մարտական գործողությունները, ռազմադիվանագիտական պատմությունը, ռազմական արդյունաբերության զարգացման խնդիրները, բանակի մատակարարման առանձնահատկությունները, զենքի ու զինամթերքի նոր տեսակների կիրառման հարցերը և այլն: Հրապարակ են գալիս ուսումնասիրություններ, որոնք լուսաբանում են նաև հատուկ ծառայությունների՝ հետախուզության ու հակահետախուզության ծավալած աշխատանքները Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին¹: Պատմաբանների ուշադրությունից դուրս է մնացել Անտանտի և

¹ Е. Ю. Сергеев, Ар. А. Улуныя. Не подлежит оглашению. Военные агенты Российской империи в Европе и на Балканах. 1900–1914 гг. (информация-анализ-прогноз). М., 1999; Очерки истории русской разведки, т. 1. От древнейших времен до 1917 года. М., 1999; Н. В. Греков. Русская контрразведка в 1905-1917 гг.: шпиономания и реальные проблемы.– <http://lib.babr.ru/index.php?book=2053>; Б. А. Старков. Охотники на шпионов. Контрразведка Российской империи 1903–1914. СПб., 2006; Ал. Колпакиди, Дм. Прохоров. Военная разведка в России до 1917 г.– <http://www.agentura.ru/dossier/Russia/gru/imperia/do1917/>; И. И. Васильев, А. А. Зданович. Генерал Н. С. Батюшин. Портрет в интерьере русской разведки и контрразведки (31. 03. 2005).– <http://www.fsb.ru/fsb/history/author/single.htm%21id%3D10318155%40fsb%20Publication.html>; В. В. Ряпалов. Германо-турецкая агентура в Средней Азии и Афганистане в начале XX века.– «Вопросы истории», 2007, ¹ 3, с. 147–152; В. А. Карелин. Русская разведка в Швеции накануне мировой войны.– «Военно-исторический журнал», 2008, ¹ 1, с. 53–57, ¹ 2, с. 49–54; Т. В. Котюкова. Турецкая агентура в России накануне Первой мировой войны по документам ЦГА Республики Узбекистан.– В кн.: Последняя война Российской империи: Россия, мир накануне, в ходе и после Первой мировой войны по документам российских и зарубежных архивов. М., 2006, с. 203–206.– <http://august-1914.ru/kotykova.html>; В. Н. Белозер. Военно-морская разведка России: история создания, становления и развития (1696–1917).– Дисс. на соиск. уч. ст. канд. ист. н. М., 2009.– <http://www.dissercat.com/content/voenno-morskaya-razvedka-rossii-istoriya-sozdaniya-stanovleniya-i-razvitiya-1696-1917> և այլն: Անտիպ է մնում 1914 թ. դեկտեմբերից մինչև 1916 թ. մարտ Կովկասյան բանակի դաշտային շտաբի հետախուզական բաժանմունքի պետ, զեներալ Դ. Պ. Դրացենկոյի (1876–?) «Записки» աշխատությունը: Այնտեղ ներկայացված է ռուսական հետախուզական ծառայության գործունեությունը ռուս-թուրքական ռազմաճակատում: Ձեռագիրը պահպանվում է Կոլումբիայի համալսարանում (ԱՄՆ) գտնվող Բ. Ա. Բախմետևի արխիվում գտնվող զեներալ Ե. Վ. Մալոլսկու արխիվում:

Քառյակ միության հետախուզությունների (մասնավորապես՝ ռուսական, բրիտանական, գերմանական և թուրքական, մասամբ ավստրիական) ծավալած գործունեությունը ռուս-թուրքական (հայկական)² ռազմաճակատում: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ ռուս-թուրքական ռազմաճակատը համարվում էր երկրորդական:

Մեր օրերում՝ հատկապես XXI դարի սկզբներից, պատմաբանները, քաղաքագետներն սկսել են ավելի հաճախ անդրադառնալ նաև ռուս-թուրքական ռազմաճակատին և այնտեղ իրենց գործունեությունը ծավալած տարբեր տեղությունների հատուկ ծառայություններին: Շրջանառության մեջ են դրվում արխիվային նորահայտ փաստաթղթեր: Ուսումնասիրողների հետաքրքրությունը պայմանավորված է նաև նրանով, որ տարածաշրջանում գրեթե նույնությամբ, իհարկե որոշ փոփոխությամբ, կրկնվում են 1914–1921 թթ. իրադարձությունները: Այսպես՝ Հյուսիսային Կովկասում 1990-ական թվականներին չեչենական պատերազմին նախորդել էին մի շարք պետությունների, մասնավորապես թուրքական և ամերիկյան, ինչպես նաև բրիտանական հետախուզությունների ակտիվ գործունեությունը: Ինչպես Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, այնպես էլ 1980-ական թվականների վերջերին, հատուկ ծառայությունների աշխատակիցները երկրամաս են թափանցում կրոնական քարոզիչների, ճանապարհորդների, զբոսաշրջիկների, արտասահմանյան բարեգործական, մարդասիրական տարբեր ընկերությունների ներկայացուցիչների, լեզվաբանների, հնագետների, ազգագրագետների և այլոց անվան ներքո:

Ամերիկացի հետախույզ, փոխծովակալ Էլիս Մ. Ջախարիասի կարծիքով, խաղաղ ժամանակ հետախուզական տեղեկությունների մոտ 95 տոկոսը հնարավոր է լինում ստանալ բաց աղբյուրներից՝ գրքերից, զբոսաշրջիկներից, ամսագրերից, մամուլից, ռադիոյից: Եվս չորս տոկոս ստացվում է կիսագաղտնի և կիսապաշտոնական աղբյուրներից: Դրանք հայթայթում են հիմնականում ռազմական կցորդները: Եվ միայն տեղեկությունների մեկ տոկոսն է, հաճախ ավելի քիչ, որ ստացվում է գաղտնի աղբյուրներից³: Ներկայումս, հաշվի առնելով էլեկտրոնային տեղեկատվական միջոցների, կապի և հաղորդակցության ուղիների բուռն զարգացումը, սահմանների թափանցիկությունը, վերը նշված հնարավորություններն անհամեմատ բազմազան են:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ռուսական հետախուզությունը գործում է Գլխավոր շտաբի գլխավոր վարչության համակարգում: Այստեղ են կենտրոնանում ռուսական զինվորական գործակալների (կցորդների) հետախուզական բնույթի զեկուցագրերը, ինչպես նաև Ռուսաստանում գործող ռազմական առաքելությունների, լրտեսության մեջ կասկածվող անձանց և կայսրությունում բնակվող օտարերկրացիների

² Ռուս-թուրքական ռազմաճակատի անվանումը կա մի շարք հեղինակների, ինչպես, օրինակ, գեներալ Ն. Գ. Կորսունի, գերմանական Գլխավոր շտաբի պետ, գեներալ Էրիխ ֆոն Ֆալկենհայնի և այլոց աշխատություններում:

³ Ծ. М. З а х а р и а с. Секретные миссии. Записки офицера разведки. Пер. с англ. З. В. Литвина и Л. С. Фадеевой. М., 1959, с. 158.

վերաբերյալ զանազան բնույթի փաստաթղթերը: Գերապատվությունը տրվում էր հավանական հակառակորդներ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի վերաբերյալ տեղեկությունների հայթայթմանը: Այդ պետություններն էին համարվում գլխավոր հակառակորդները:

Բրիտանացի պատմաբան Ալեքս Մարշալն իր հետազոտությունում հիմնականում ուսումնասիրել է ռուսական կայսրության արտաքին քաղաքականությունը Մերձավոր Արևելքում և Միջին Ասիայում: Դրանք այն տարածքներն էին, որտեղ բախվում էին Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի շահերը: 1800 թ. սկսած՝ ռուսական Գլխավոր շտաբի բարձրաստիճան սպաները հետախուզական բնույթի ուղևորություններ են կատարում Ասիա, ինչպես նաև Օսմանյան կայսրություն: Նրանց կողմից հավաքած հետախուզական տեղեկությունները պետք է նպաստեին հետագա պատերազմների ծրագրավորմանը: Գլխավոր շտաբի սպաները հատկապես ակտիվորեն հետախուզական տեղեկություններ էին հավաքում Բոսֆորի նեղուցը պաշտպանող թուրքական ամրությունների մասին⁴:

Պատերազմի ժամանակ Գլխավոր շտաբը ստանում է փաստաթղթեր, որոնք ներկայացնում են մարտական գործողությունների ընթացքը, տեղեկություններ հակառակորդի մասին, արտասահմանյան և ռուսական մամուլում տպագրված հաղորդումները պատերազմի ընթացքի, մարտական գործողությունների, տնտեսության վիճակի և այլնի մասին: Ստացվել են տեղեկություններ հակահետախուզության և ռազմական գրաքննության գործունեության վերաբերյալ⁵:

1914–1917 թթ. հակառակորդի մասին տեղեկություններ են հաղորդել արտասահմանում աշխատող ռուսական զինվորական 17 կցորդները: Նրանք անմիջականորեն ենթարկվել են Գլխավոր շտաբին⁶:

Տեղանքի հետազոտմամբ զբաղվում էին Թուրքիայում դիվանագիտական զանազան պաշտոնյաներ՝ հյուպատոսի կամ գլխավոր հյուպատոսությունների քարտուղարների պաշտոններ զբաղեցնող Գլխավոր շտաբի սպաները: Նրանք ամենայն մանրամասնությամբ ծանոթ էին թուրքական զինուժի թվաքանակին և սպառազինությանը⁷:

⁴ A. Marshall. The Russian General Staff and Asia, 1800–1917. London, 2006. Գրքի գրախոսությունը տե՛ս «Военно-исторический журнал», 2007, № 1, с. 15. Պարսկաստանը, Աֆղանստանը, Մոնղոլիան ու Կորեան ևս գտնվում էին ռուսական աշխարհաքաղաքական հետաքրքրությունների կենտրոնում: Նշված պետություններում հետախուզական գործունեություն է ծավալում ռուսական բանակի հայազգի հետախույզ, գեներալ Հակոբ Բագրատունին (1879–1943 թթ.). տե՛ս Ա. Ե. Մարգոյան. Հետախուզություն և հակահետախուզություն. հայկական հետք (կենսագրական ակնարկներ հետախույզների և հակահետախույզների մասին), Երևան, 2005, էջ 32–33:

⁵ Российский государственный архив. Путеводитель в 4-х т, т. 1. М., 2006, с. 105.

⁶ Նույն տեղում, էջ 135: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ռուսական հետախուզությունը լուրջ կորուստ է կրում, երբ բացահայտվում է Ստոկհոլմում ռուսական ռազմական կցորդ, փոխգնդապետ Պ. Լ. Ասանովիչի հետախուզական գործունեությունը: Դա հնարավորություն է տալիս նաև գերմանական ու ավստրո-հունգարական հետախուզություններին բացահայտել Եվրոպայում ռուսական գործակալական ցանցի զգալի մասը (տե՛ս В. А. Карелин. Նշվ. աշխ., էջ 53):

⁷ E. В. Масловский, Мировая война на Кавказском фронте мировой войны в 1914–1917 г. Стратегический очерк. Париж, 1933, с. 46.

Գերմանական հետախուզության կենտրոնն Անդրկովկասում 1871 թ. Թիֆլիսում հիմնված հյուպատոսությունն էր: Ըստ ռուսական ոստիկանության ունեցած տեղեկությունների՝ հյուպատոսարանն իր հետախուզական աշխատանքներում հիմնվում էր նաև Կովկասում գտնվող գերմանական գաղութների վրա: Ռուսական իշխանությունների համաձայնությամբ, ռուսաստանաբնակ գերմանացիներին թույլատրվում է կազմակերպել մշակութային-տնտեսական մի շարք միություններ, որոնք ակտիվ կապեր են պահպանում Գերմանիայի հետ: Ենթադրվում է, որ գերմանական հետախուզության հետ կապն իրականացվում էր այդ միությունների միջոցով:

Ռուսական ոստիկանությունը Կովկասի հայկական շրջաններում գերմանական ազդեցության տարածման ձևերից մեկն էր համարում «Հայ-գերմանական միությունը»: Ըստ ոստիկանության՝ կազմակերպությունը ստեղծվել էր «Դաշնակցական վտարանդիների նախաձեռնությամբ, Ռուսաստանի նկատմամբ ունեցած անձնական հակակրանքի դրդմամբ»⁸: Ընդհանրապես պետք է նշել, որ ոստիկանության կողմից հորինված «Դաշնակցության գործից» հետո պահնորդական բաժանմունքն ամենայն աչալրջությամբ հետևում էր հայ հասարակական գործիչներին, անկախ նրանց քաղաքական հայացքներից: Ցանկացած «շեղում» պաշտոնական ուղղությունից որակվում էր որպես դաշնակցական, այսինքն՝ հակակառավարական: Այնպես որ չպետք է զարմանալ, որ «Հայ-գերմանական միության» ստեղծումը նման որակում է ստանում: Ավելացնենք, որ նման վերաբերմունք դրսևորվում էր նաև խորհրդային տարիներին և դա անվտանգության ծառայությանը առիթ էր տալիս հետապնդումների ենթարկել հայ մի շարք մտավորականների⁹:

Տեղեկությունների հավաքման համար գերմանական հետախուզությունն օգտագործում էր այլ միջոցներ, ինչպես, օրինակ, զբոսաշրջիկների, ճանապարհորդների, զանազան ընկերությունների շրջիկ ներկայացուցիչների և այլոց¹⁰: Նրանց ինտենսիվ «այցելությունները» Կովկասի փոխարքայություն, այդ թվում՝ Երևանի նահանգ հատկապես ակտիվանում են պատերազմի նախօրյակին:

XIX վերջին–XX դարի սկզբին Կովկասը բուռն զարգանում էր: Դա պայմանավորված էր հատկապես Բաքվի նավթահանքերով, որոնք գրավում էին շատ տեղությունների գործարարների ուշադրությունը: Գերմանացի արդյունաբերողներն իրենց կապիտալները ներդնում էին Բաքվի նավթային արդյունաբերության մեջ: Դա ապահովում էր գերմանական ներկայությունը Կովկասում: Գերմանական կապիտալի թափանցմանը տարածաշրջան զգալիորեն նպաստում էր Թիֆլիսի գերմանական հյուպատոսարանը:

⁸ Գ. Գ ա լ ո յ ա ն. Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից–1917 թ.), Երևան, 2004, էջ 637:

⁹ Ավելի մանրամասն տե՛ս Վ. Տ ե թ ո յ ա ն. Գիտական և հրապարակախոսական աշխատություններ, առաջաբանը և ծանոթագրությունները Ռ. Օ. Սահակյանի, հրատարակության պատրաստեց Ն. Վ. Դերոյանը, Երևան, 2006, էջ 21:

¹⁰ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 102, ց. 2, գ. 20, թ. 136, 147, 161, 165:

1910 թ. սկզբին Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության ունեցած տեղեկության համաձայն՝ Թուրքիայում կազմվում է հատուկ ծրագիր, համաձայն որի նախատեսվում էր ռուսահպատակ մահմեդականներից դրամական միջոցներ հանգանակել օսմանյան բանակն ու նավատորմն ուժեղացնելու համար: Այդ հանգամանքը չէր կարող չանհանգստացնել ռուսական իշխանություններին: ՆԳ և արտաքին գործերի նախարարությունների ղեկավարությունները լուրջ հիմքեր ունեին կասկածելու, որ Թուրքիայի հետ հնարավոր զինված բախման դեպքում իսլամամետ տարրերը կանցնեն հակառակորդի կողմը: Այդ իսկ պատճառով ՆԳ - նախարարության Հոգևոր գործերի դեպարտամենտը 1910 թ. հոկտեմբերի 7-ի շրջաբերական նամակում պահանջում է խստագույն հսկողության ներքո վերցնել թուրքահպատակ քաղաքացիներին: Թուրքիայից ժամանած քարոզիչները հիմնականում գործում էին Ղրիմում, Կովկասում և Թուրքեստանում:

Թուրքական հետախուզությունը մահմեդական հոգևորականության միջոցով համակիրներ և գործակալներ էր հավաքագրում ռուսահպատակ այն մահմեդականներից, որոնք հաջ էին գնում Մեքքա և կանգ էին առնում Կ. Պոլսում: Նրանց հետ անցկացվում էին հակառուսական և պանիսլամիստական գաղափարական ուղղվածությամբ զրույցներ, պարզում նրանց տրամադրվածությունը և ապա առաջարկում համագործակցել հետախուզության հետ: Ինքնին հասկանալի է, որ համագործակցությունը հաճախ քողարկվում էր կրոնական քարոզչությամբ:

Թուրքական հետախուզությունը Ռուսաստանի տարածք էր թափանցում նաև իր համակիրների կամ գործակալների միջոցով՝ հիմնելով զանազան կրոնական և բարեգործական հաստատություններ, որոնց նպատակն էր ռուսահպատակ մահմեդականների շրջանում պանթուրքիզմի տարածումը¹¹: Մա պետք է համարել գաղափարական դիվերսիայի ձևերից մեկը, որը հիմնականում պարարտ հող էր գտնում մահմեդականների շրջանում, որոնք իրենց ազգային ինքնությունից ավելի բարձր էին դասում կրոնականը:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ռուսական ոստիկանությունը տեղեկություն է ստանում, այսպես կոչված, «մահմեդական կոմիտեի» կողմից Ռուսաստանի դեմ ուղղված թուրքերեն հայտարարությունների տարածման մասին, որտեղ կոչ էր արվում բոլոր մահմեդականներին միավորվել և «արյունով պաշտպանել իսլամը, որպեսզի քրիստոնյաներին հնարավորություն չտրվի հաղթանակել և ոչնչացնել մահմեդականությանը»¹²: Բացի այդ, իսլամի ուսուցման անվան տակ հիմնվում են հոգևոր դպրոցներ, որոնք ոչ միայն հակառուսական քարոզչություն են տարածում, այլև հանդիսանում են թուրքական հետախուզական կենտրոններ, որտեղ հավաքագրվում են գործակալներ:

Ինչպես իր հուշերում վկայում է ավստրիական Գլխավոր շտաբի պետ գեներալ Է. Ֆոն Ֆալկենհայնը, թուրքերը լայնածավալ քարոզչություն են

¹¹ Т. М. Голубкина, А. К. Тихонов. Мусульмане Среднего Поволжья в годы Первой мировой войны, с. 265.— Доклады Академии военных наук. Военная история, 1 5. Саратов.— 2006 <http://www.sgu.ru/files/nodes/10071/35.pdf>

¹² Т. В. Котюкова. Турецкая агентура..., с. 203—206.

իրականացնում Կովկասում, Պարսկաստանում և Աֆղանստանում: Այստեղից փորձեր են արվում սրբազան պատերազմի հրահրել նաև Հնդկաստանի մահմեդականներին¹³: Պատմաբան Տ. Կոստյուկովայի կարծիքով՝ Ռուսաստանը պատերազմի տարիներին պարտվել է Թուրքիային գաղափարական ասպարեզում տարվող պայքարում, քանի որ վերջինս լայնորեն իրագործել է պանիսլամիզմը ռուսահպատակ մահմեդականներին իր կողմը գրավելու համար, իսկ ռուսական իշխանությունները չեն կարողացել դրան արդյունավետ հակադարձել¹⁴: Դրա վկայություններից մեկը կարող է հանդիսանալ Պարսկաստանի դիրքորոշումը պատերազմի ժամանակ: Ռուսները հարկադրված էին զգալի ուժեր (գեներալ Ն. Ն. Բարաթովի ռազմարշավային կորպուսը՝ Կովկասյան I կազակային և Կովկասյան հեծելազորային դիվիզիաները, գեներալ Ֆ. Գ. Չեռնոզուբովի Ադրբեջանական ջոկատը՝ Կովկասյան IV կազակային դիվիզիան) ուղղել Պարսկաստան, որպեսզի կարողանան այդ երկիրը պահել իրենց հսկողության ներքո:

Անհանգստացած փոխարքայությունում գերմանական հետախուզության ակտիվությունից՝ Կովկասյան բանակի շտաբի պետ, գեներալ Ն. Ն. Յուդենիչը շտապում է այդ մասին զեկուցել փոխարքա Ի. Ի. Վորոնցով-Դաշկովին: Ռուսական հակահետախուզությունը կարողանում է կայանել Անդրկովկասում գործող գերմանական գործակալների մի մասին և զգալի հարված հասցնել այդ հետախուզությանը: Ռուս հակահետախույզներին հաջողվում է պարզել, որ գերմանական հետախուզության կենտրոններն են եղել Կովկասում «Ջինգեր» ֆիրմայի մասնաճյուղը և «Դոյչե բանկի» բաժանմունքը:

Ռուսական հակահետախուզությունից¹⁵ աննկատ չի մնում Թիֆլիսում գործող «դիվանագետ» Վ. ֆոն Շուլենբուրգի ակտիվությունը: Նա 1911–1914 թթ. վարել է Թիֆլիսի գերմանական հյուպատոսի պաշտոնը: Տեղեկություններ են ստացվում այն մասին, որ Թավրիզի գերմանական հյուպատոսարանում կազմակերպվել է հետախուզական ռեզիդենտուրա: Իսկ Էրզրումի գերմանական հյուպատոսարանում հետախուզական աշխատանքները ղեկավարում է հյուպատոս Էդգար Անդերսը¹⁶: Էրզրումը թուրքական

¹³ Эрих фон Фалькенгайн. Верховное командование 1914–1916 гг. в его важнейших решениях. Пер. с нем. А. Е. Спесарева. М., 1923 с. 54.

¹⁴ Россия и Великая война: Опыт и перспективы осмысления роли Первой мировой войны в России и за рубежом. Стеногр. междунар. конф. 8 декабря 2010 г.– http://www.russkiymir.ru/export/sites/default/russkiymir/ru/analytics/docs/Rossia_i_velikaya_voina.pdf

¹⁵ Մինչև 1917 թ. հոկտեմբերը ռազմական հակահետախուզության աշխատանքները կազմակերպում և ղեկավարում էր Ռուսաստանի զինված ուժերի Գերագույն շտաբի գլխավոր վարչության գլխավոր-կվարտիրմեստերության (թիկունքի, այդ թվում՝ հետախուզության և հակահետախուզության) II բաժանմունքը (տե՛ս Ս. Ս. В о й т и к о в. Зарождение советской военной контрразведки.– «Военно-исторический журнал», 2010, ¹ 3, с. 43): Վ. ֆոն Շուլենբուրգը փաստական վկայություններ է թողել հայերի ցեղասպանության, մասնավորապես Շապին Գարահիսարի հայ բնակչության կոտորածների մասին: 1918 թ. վերջին նա Անդրկովկասում գլխավորել է գերմանական դիվանագիտական ծառայությունը: 1934–1941 թթ. եղել է ԽՍՀՄ-ում Գերմանիայի դեսպանը: 1944 թ. մասնակցել է Ա. Հիտլերի դեմ իրականացված անհաջող մահափորձին, որի համար ենթարկվել է մահապատժի:

¹⁶ С. Р. Тарасов. Закавказский след «Пакта Риббентропа-Молотова» <http://www.regnum.ru/news/1175147.html>. 1913 թ. սեպտեմբերի 12-ին Էրզրումի ռուսական Գլխավոր

ռազմական հետախուզության (ռեզիդենտական) գլխավոր կենտրոններից էր: Այստեղից էին հիմնականում ուղարկում գործակալներին և ղեկավարում հետախուզական աշխատանքներն Անդրկովկասում:

1914 թ. փետրվարի 11-ին Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոսարանի ունեցած գործակալական տվյալների համաձայն՝ Կարս է ժամանում թուրքական գործակալ՝ հետախուզության հանձնարարությունը կատարելու համար¹⁷: Նույն թվականի հունիսի սկզբներին Օլթիի օկրուգում լազի տարազով գտնվել են երկու թուրք և մեկ գերմանացի սպա: Բացի այդ, մոլլայի զգեստով շրջում են թուրք գործակալներ, որոնք քայքայիչ քարոզչություն են կատարում մահմեդական բնակչության շրջանում՝ կոչ անելով պատերազմի դեպքում անցնել Թուրքիայի կողմը¹⁸: Իսկ հուլիսի սկզբներին Կովկաս են գալիս գերմանացի երկու ուսուցիչ, որոնք ցանկանում են լինել Սվանեթիայում, Օսիայում, բարձրանալ Արագած և Արարատ լեռները, ապա այցելել Սևանա լիճ¹⁹:

Պատերազմի նախօրյակին ռուսական իշխանություններն անուշադիր էին Կարսի մարզում թուրք գործակալների հաճախակի հայտնվելու իրողության հանդեպ: Ճիշտ է, Էրզրումի ռուսական Գլխավոր հյուպատոսարանը զգուշացրել էր այդ մասին, սակայն ռուսիկանությունը ինչպես հարկն է հետաքննություն չէր կատարել: Մինչդեռ հյուպատոսարանը նույնիսկ նշել էր նրանց հնարավոր երթևեկության ուղին: Ենթադրվում էր, որ երիտթուրքական գործակալները նպատակ ունենին դրամական միջոցներ հայթայթել թուրքական ռազմական նավատորմի համար²⁰:

Մի շարք դեպքերում ռուսական իշխանություններին հայտնի են դառնում թուրք գործակալների հայտնվելը սահմանամերձ շրջաններում²¹: Այսպես, նրանք տեղյակ էին, որ 1914 թ. հոկտեմբերի վերջերին Բաթումի նահանգի սահմանամերձ գյուղերում գտնվում էին Թուրքիայից ժամանած հրոսակախմբեր²²: Սակայն ռուսիկանությունը չկարողացավ կանխարգելիչ գործողություններ իրականացնել Կարսի մարզում և Բաթումի նահանգում, ի գործու չեղավ խոչընդոտել տեղի մահմեդականների մի մասի ներգրավումը բացահայտ խոտվարարական ելույթներին, որոնք վերածվեցին բացահայտ դիմակայման: Անուշադրության մատնվեց թուր-

հյուպատոսությունը Կ. Պոլսում ռուսական դեսպան Մ. Ն. Գիրսին ուղղած հաղորդումում զեկուցում է, որ սեպտեմբերի 1-ին Էրզրում է ժամանել նորանշանակ հյուպատոս Էդգար Անդերսը: Հայտնվում է, որ նա ծառայել է Բաղդադում և գերմանական բանակի սպա է: Երկար տարիներ բնակվել է Ռուսաստանում ու տիրապետում է ռուսերենին, որոշ ժամանակ վարել է Ադանայի գերմանական փոխհյուպատոսի պաշտոնը (տե՛ս ՀԱՄ, ֆ. 818, ց. 1, գ. 587, թ. 76-77): Ասվածից կարելի է եզրակացնել, որ գերմանական հետախուզությունը Էրզրում էր ուղարկել իր փորձառու սպաներից մեկին, որը ոչ միայն գիտեր տարածաշրջանը, այլև ռուսական իրականությունը: Այս փաստից կարելի էր եզրակացնել, որ գերմանացիները բավական մեծ տեղ էին հատկացնում Կովկասում նախատեսվող իրենց ապագա գործողություններին:

¹⁷ ՀԱՄ, ֆ. 102, ց. 2, գ. 21, թ. 43:

¹⁸ ՀԱՄ, ֆ. 102, ց. 2, գ. 20, թ. 208:

¹⁹ ՀԱՄ, ֆ. 113, ց. 3, գ. 102, թ. 165-166:

²⁰ ՀԱՄ, ֆ. 102, ց. 2, գ. 21, թ. 8:

²¹ Տե՛ս ՀԱՄ, ֆ. 102, ց. 2, գ. 20, թ. 208:

²² Ա. Կ ի Ր ի մ յ և ն. Վարդան Մազմանյանի վկայությունները Բաթումի մարզի Տանձոտ գյուղի հայ բնակչության կոտորածների մասին. - «Բանբեր Հայաստանի արխիվներին», 2005, -1, էջ 10:

քական հետախուզության ակտիվ գործունեությունը ռուսական սահմանամերձ և մահմեդականներով բնակեցված բնակավայրերում: Դա էլ պատճառ դարձավ, որ 1914 թ. հոկտեմբեր–նոյեմբեր ամիսներին Կարսի մարզում և Բաթումի նահանգում տեղի ունենան թուրք, քուրդ և աջար բնակչության խռովարարական զանգվածային ելույթներ, որոնք վեր են ածում նույնիսկ գորքերի հետ բացահայտ բախման:

1914 թ. օգոստոսին Թուրքիայի ռազմական նախարար Էնվերի ուղղակի ցուցումով կազմակերպվում է, այսպես կոչված, «Թուրքական սանիտարական առաքելությունը», որն իրականում քաղաքական կազմակերպություն էր և ընդգրկում էր օսմանահպատակ կոմկասցիներին: Կազմակերպությունը զլխավորում էր ազգությամբ ուրբիս Ֆուադ փաշան: Կազմակերպությունը, բարեգործության անվան տակ գործելով, պետք է Կովկասում հրահրեր հակառուսական գործողություններ: Պատերազմը սկսելուց մոտ մեկ տարի անց՝ 1915 թ. սեպտեմբերին, թուրքերն արդեն կազմակերպում են «Կովկասի անկախության կոմիտե»: Վերջինիս ներկայացուցիչները գործում էին Եվրոպայում, Գերմանիայում և Ավստրո-Հունգարիայում գտնվող ռազմագերիների ճամբարներում, հավաքագրում էին կոմկասցիներին: 1916-ին կազմակերպվում է «Թուրքիայում հյուսիս-կովկասյան քաղաքական վտարանդիների կոմիտե»: Նշված կազմակերպությունների ստեղծումը նպատակ ուներ Կովկասի փոխարքայությունում հրահրել հակառուսական խռովություններ:

Ի տարբերություն հակառակորդի՝ ռուսական հրամանատարությունը չէր նախաձեռնում բազմազգ թուրք ռազմագերիներից համապատասխան ստորաբաժանումներ կազմակերպել: Եվ դա այն դեպքում, երբ ռուսական գերության մեջ կար օսմանյան բազմազգ բանակի 950 սպա և 50 հազար զինվոր²³: Հայկական հասարակական և բարեգործական կազմակերպությունները, Հայ առաքելական եկեղեցին, ինչպես նաև Պետական դումայի պատգամավոր Միքայել Պապաջանյանը բազմիցս դիմումներ են հղում ռուսական կառավարությանը՝ ազգությամբ հայ ռազմագերիներին ազատելու մասին, սակայն, ապարդյուն²⁴:

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբնական շրջանում ինչպես Անտանտի, այնպես էլ Քառյակ միության երկրների ղեկավարությունները հատուկ ծառայություններին հատկացնում են երկրորդական դեր: Այդ երկրների զինվորական բարձրագույն ղեկավարությունը համոզված էր, որ պատերազմը կարճ է տևելու, ուստի հետախուզությանը և հակահետախուզությանը հանձնարարվում էին ոչ էական առաջադրանքներ: Մակայն, այն բանից հետո, երբ մարտական գործողությունները սկսում են ձգձգվել, հակամարտող կողմերը ստիպված են լինում զգալի տեղ հատկացնել հատուկ ծառայությունների գործունեությանը: Այս հարցում հատկապես աչքի են ընկնում բրիտանական և գերմանական հետախուզությունները:

²³ И. Ш л е й х е р. Пленные стран Четвертного союза в Сибири. Некоторые вопросы транспортировки и содержания в лагерях.– Военно-исторические исследования в Поволжье 6.– <http://www.sgu.ru/files/nodes/9659/12.pdf>

²⁴ «Հորիզոն» (Թիֆլիս), 24. IV. 1916:

Պատերազմը սկսելուց հետո ակտիվանում է թուրքական հետախուզության գործունեությունը: Տեղական մահմեդական հոգևորականությունն ուժեղացնում է պանիսլամիստական քարոզչությունը: Այդ է պատճառներից մեկը, որ, օրինակ, Էջմիածնի գավառում ոստիկանությունն ուժեղացնում է հսկողությունը տեղի մահմեդական հոգևորականության նկատմամբ²⁵: 1915 թ. մայիսի 21-ին «Հորիզոն»-ի թղթակիցը կոչ է անում համաքաղաքացիներին զգուշանալ թուրք լրտեսներից, «վասն զի անոնք թիրք զօրքերէն ալ շատ են»:

Բաթումի մարզի Արդվիհի օկրուգի Արադանուչի տեղամասի Տանձոտ գյուղի բնակիչ Վարդան Մազմանյանի վկայության համաձայն, «Երբ Օսմանյան կառավարությունը պատերազմ հայտարարեց դաշնակիցներին, այն ժամանակ ավելի շատացավ Տանձոտի կողմերը Տաճկաստանից եկած ազենտների թիվը: Ավելացան նաև Բաքվից ու Թիֆլիսից զանազան պատրվակի տակ եկող ինտելիգենտ քարոզիչները: Սկսվեց խուլ շարժում ամբողջ շրջանի թուրքերի մեջ»²⁶:

Ռուսական հակահետախուզությունը և ոստիկանությունն անտեսում են Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոսարանի տեղեկությունն այն մասին, որ Ղարաքիլիսայի (Ալաշկերտի) շրջանում սկսել են կենտրոնանալ քրդական համիդետական 16 գնդեր: Միաժամանակ թուրքական զինվորական իշխանությունները սկսում են ձևավորել քրդական դիվերսիոն ջոկատներ, որոնք սկսում են հաճախակի խախտել ռուս-թուրքական սահմանը: Սեպտեմբերի ընթացքում քրդերն առևանգում են Ռուսաստանի սահմանամերձ շրջաններից մինչև տասը հազար գլուխ տնային կենդանիներ: Քրդերին տրամադրվում էր մեծ քանակությամբ զենք և զինամթերք: Ցեղապետերին խոստումներ են տրվում ապագայում քրդերին ինքնավարություն տալու մասին²⁷:

1914 թ. սեպտեմբերի սկզբներին ռուս-թուրքական սահմանի անմիջական մերձակայությամբ սկսում են հայտնվել թուրքական հեծելապարեկախմբեր: Գերմանացի և թուրք սպաները բացահայտ իրականացնում են տեղանքի քարտեզագրում: Իսկ սեպտեմբերի 15-ին և 23-ին Կարսի շրջանում տեղի են ունենում զինված բախումներ ռուսական սահմանն անցած թուրք և ռուս զինվորների միջև²⁸:

Անշուշտ, ռուսական հրամանատարության համար պատերազմի մեջ Թուրքիայի մտնելն անսպասելի չէր: Նրանք գիտեին, որ հակառակորդն անպայման դաշնակցելու է Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի հետ: Ռուսական Գլխավոր շտաբը ենթադրում էր, որ Թուրքիան պատրաստ կլինի հարձակման միայն 1915 թ. գարնանը: Այնուամենայնիվ, ռուսները գրանցում են մի կարևոր հաղթանակ. գերազանց կազմակերպված ապատեղեկատվության շնորհիվ հնարավոր է դառնում Թիֆլիս բերել Էրզրումի գերմանական հյուպատոս Է. Անդերսին և նրա օգնական, կապիտան

²⁵ Տե՛ս ՀԱՄ, ֆ. 102, ց. 2, գ. 21, թ. 98:

²⁶ Ա. Կ ի Ր ի մ յ ա ն. նշվ. հոդվ., էջ 4:

²⁷ <http://kurdissue.narod.ru/10u.html>

²⁸ Г. В. П и п и я. Նշվ. աշխ., էջ 50:

Վեյկմանին ու ձերբակալել²⁹: 1914 թ. հոկտեմբերի 20-ին ռուսների կողմից կալանվում են Ուրմիայի թուրքական հյուպատոսը և լրտեսության մեջ կասկածվող 12 այլ անձինք: Նրանցից երկու հոգու հաջողվում է ճանապարհին փախչել³⁰: 1914 թ. նոյեմբերի 21-ի Նախիջևանի գավառային ոստիկանության պետի զեկուցագրի համաձայն՝ կալանվել են 15 թուրքահպատակ քաղաքացիներ, որոնք համազոր-
ծակցել են Ուրմիայի թուրքական հյուպատոսի հետ³¹:

Սն ծովում ռուսական ռազմական նավատորմն ուներ գերակշիռ դեր, որը, սակայն, չիսանգարեց հակառակորդին իրականացնել համարձակ օպերացիա: 1914 թ. նոյեմբերի կեսերին թուրքերը կարողանում են Խոպ ծովափնյա քաղաքի մոտ ափ հանել Կ. Պոլսից նավերով տեղափոխված VII և VIII հետևակային դիվիզիաները: Նրանք, ունենալով ռուսահպատակ մահմեդականների զանգվածային աջակցությունը, պարտության են մատնում ռուսներին և նոյեմբերի 18-ին գրավում Արդվինը, նոյեմբերի 20-ին՝ Արդանուջը և ընդհուպ մոտենում Բաթումին³²: Նշված տարածքների գրավումն ուղեկցվում է հիմնականում հայ բնակչության կողոպուտով և սպանություններով³³:

Վերը բերված փաստը վկայում է այն մասին, որ թուրքական հրամանատարությունը հետախուզական հստակ տեղեկություն ուներ, որ դեսանտն իջեցնելու ողջ ընթացքում ռուսները ծովում որևէ գործողություն չեն իրականացնելու, և ռուսական ռազմական նավատորմը դուրս չի գալու նավահանգիստներից:

Ինչպես ասվեց, պատերազմի սկզբնական շրջանում պատերազմող պետությունները հետախուզությանը և հակահետախուզությանը հատկացնում են երկրորդական դեր: Նույնիսկ միջոցառումներ չեն կատարվում պետական գաղտնիք հանդիսացող տեղեկությունների, ինչպես, օրինակ, տնտեսության դրությունը լուսաբանող փաստերի հրապարակումներն արգելելու համար³⁴: Բացի այդ, Անտանտի տերությունների հատուկ ծառայությունները գործում էին միմյանցից անկախ: Չէր փոխանակվում հետախուզական և հակահետախուզական բնույթի որևէ տեղեկատվություն³⁵:

²⁹ Տե՛ս ՀՄՄ, ֆ. 102, ց. 2, գ. 20, թ. 157: Բրիտանական հետախուզության ունեցած տեղեկության համաձայն՝ Է. Անդերսն Էնվեր փաշայի մտերիմ բարեկամն էր (տե՛ս Օ. Несе. Турецко-большевицкое сотрудничество на Востоке (по документам архивов Великобритании, 1920–1921 годы).– В кн.: Последняя война Российской империи: Россия, мир накануне, в ходе и после Первой мировой войны по документам российских и зарубежных архивов. М., 2006, с. 375–380. — <http://august-1914.ru/nese.html>

³⁰ Տե՛ս ՀՄՄ, ֆ. 101, ց. 1, գ. 94^{հաս. I}, թ. 161:

³¹ Նույն տեղում, թ. 150:

³² Д. Г. Мартиросян. Сарыкамышская операция (12–24 декабря 1914 г.).– Военно-исторические исследования в Поволжье, вып. 7. Саратов, 2006, с. 57. — <http://www.sgu.ru/files/nodes/10090/08.pdf>

³³ Այդ մասին մանրամասն տե՛ս ՀՄՄ, ֆ. 28, ց. 1, գ. 383, թ. 13–17:

³⁴ Մանրամասն տե՛ս Д. Г. Гужва. Правовая основа деятельности российской военной периодической печати в 1914–1918 гг.– «Военно-исторический журнал», 2009, ¹ 10, с. 66–68.

³⁵ Ինչպես նշում է ամերիկացի պատմաբան Ռ. Ռոուանը, «Երբ խոսում են համաշխարհային պատերազմի մասին, ապա միշտ հիշում են ռազմական հետախուզության բացակայության մասին» (տե՛ս Ռ. Ռոուանի. Հետախուզություն և հակահետախուզություն, Երևան, 1937, էջ 15):

Միայն 1915 թ. վերջին են Փարիզում դաշնակիցները հիմնում «Միջդաշնակցային բյուրո», որը պետք է մշակեր համատեղ միջոցառումներ հակառակորդի հետախուզության և քայքայիչ գործողությունների դեմ պայքարելու համար:

Գեներալ Ն. Գ. Կորսունի աշխատությունից տեղեկանում ենք, որ Կովկասյան բանակի դաշտային շտաբում կար հետախուզության ընդամենը երեք սպա³⁶: Եվ դա այն դեպքում, երբ 1915 թ. ռազմաճակատի երկարությունը 2500 կմ էր և ձգվում էր Սև ծովից մինչև Սեխստան (աֆղանական սահման), իսկ Արևելյան (ռուսավատրիական) ռազմաճակատում ռուսական զորքերի ճակատը 1200 կմ էր³⁷:

Կովկասյան բանակի հրամանատարների և բարձրաստիճան սպաների թվում զգալի էին հետախույզները, որոնց թվում էին Ադրբեջանական (Կովկասյան II հեծելազորային դիվիզիա) ջոկատի հրամանատար, գեներալ Գ. Ֆ. Չեռնոզուբովը³⁸, 39-րդ հետևակային դիվիզիայի պետ, գնդապետ, սպա գեներալ Դ. Պ. Դրացենկոն, Կովկասյան բանակի շտաբի պետ, գեներալ Ե. Ե. Վիշինսկին (1908 թ. հոկտեմբերի 13-ից մինչև 1914 թ. մայիսի 1-ը Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոսարանի քարտուղար), գեներալ Մ. Ա. Պրժնալսկին (1892–1901 թթ. Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոսարանի քարտուղար) և ուրիշներ³⁹:

Բանակային հետախուզության գործունեության մասին բավականին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում գեներալ Ե. Վ. Մասլովսկին: Նա գլխավորապես առանձնացնում է Կովկասյան բանակի շտաբի հետախուզական բաժանմունքի պետ, գնդապետ Դ. Պ. Դրացենկոյի ծավալած գործունեությունը⁴⁰: Կովկասյան բանակին հետախուզական տեղեկություններ էր տրամադրում շտաբին ամրագրված բրիտանացի սպա, մայոր Մարշը⁴¹:

Ռուս-թուրքական ռազմաճակատում ռուսական հետախուզության ծավալած գործունեության մասին որոշ տեղեկություններ է հայտնում Կովկասյան բանակի, սպա ՀՀ-ն բանակի գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի պետ Տիգրան Դեոյանը⁴²:

Ռուսական բանակի հրամանատարությունն աստիճանաբար սկսում է ավելի մեծ տեղ տալ հետախուզությանը: Օգտագործվում էր ցանկացած հնարավորություն՝ հակառակորդի մասին տեղեկություններ հայթայթելու

³⁶ Н. Корсунов. Эрзерумская операция на Кавказском фронте в 1916 году. М., 1938, с. 148.

³⁷ Նույն տեղում, էջ 184:

³⁸ Е. Ю. Сергеев, Ар. А. Улунян. Նշվ. աշխ., էջ 43:

³⁹ Տ. Դենյաևց. Հետախույզի մը հուշերը. – «Վեկ», (Փարիզ), 1938, թիվ 3, էջ 59, ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 126, թ. 1:

⁴⁰ Е. В. Масловский. Նշվ. աշխ., էջ 48:

⁴¹ Նույն տեղում:

⁴² Տ. Դենյաևց. Հետախույզի մը հուշերը. – «Վեկ», 1938, թիվ 2, էջ 48–54, թիվ 3, էջ 58–72 և այլն: Տե՛ս նաև Վ. Հ. Վիրաբյան. Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը (1918–1920 թթ.), Երևան, 2006:

համար: Կովկասյան IV բանակային կորպուսի հետախուզական բաժանմունքի պետ, կապիտան Վլ. Ան. Օզոլը (Վոլդեմար-Օսկար Օզոլս, հետագայում խորհրդային հետախույզ) պարբերաբար տեղեկություններ էր ստանում 1915 թ. սկզբին Բզդիբում գործող «Հայկական շտաբից»: Նրա անդամներից՝ Կովկասյան IV բանակային կորպուսի հետախուզական բաժանմունքի աշխատակից Տիգրան Դևոյանը տեղեկություններ էր հավաքում Բզդիբով անցնող գաղթականներից, «որոնք կուտային շատ արժեքավոր տեղեկություններ թրքական ուժերու մասին»⁴³: Զեկուցագրերի պատճեն հանձնվում էր Ռոստոմին (Ստեփան Զորյան): Բացի ռազմաճակատային հետախուզությունից, հայ հետախույզներին ուղարկում են Թուրքիայի խորքերը, ընդհուպ մինչև Կ. Պոլիս՝ հայթայթելու տեղեկություններ հակառակորդի զինուժի թվաքանակի, տեղաշարժման, պարենի ապահովության և այլնի մասին⁴⁴: Ողջ պատերազմի ընթացքում ռուսական հրամանատարությունը Թուրքիայում ներդրված իր գործակալներից ստանում էր տեղեկություններ: Տ. Դևոյանի գնահատմամբ, մինչև պատերազմը լրտեսների թիվը հասնում էր հազարների: Նրանք «շատ կարևոր դեպքերուն՝ իրենք փախչելով կուզային կը հանձնվեին ռուսական բանակին՝ հետները բերելով շատ կարևոր տեղեկություններ»⁴⁵:

Պատերազմի տարիներին գերմանական հետախուզությունը գլխավորող գնդապետ Վալտեր Նիկոլայի (1913–1919) գնահատմամբ, «Հայերը՝ որպես լրտեսներ շատ վճռական և սարսափելի էին: Նրանք այստեղ (հետախուզության բնագավառում – Ռ. Ս.) ևս թուրքերին շատ դժվարություններ էին հարուցում, որը զգալիորեն նպաստում էր հայերի նկատմամբ միջոցառումների ուժեղացմանը: Այսպիսով՝ պատերազմի ժամանակ հայերի ճակատագրի նկատմամբ մեղքի մի մասը կրում է թշնամական հետախուզությունը»⁴⁶: Ինքնին հասկանալի է, որ գնդապետը փորձում է նման մեկնաբանությամբ արդարացնել Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին արևմտահայերի ցեղասպանությունը և մեղմել կամ թաքցնել դրանում կայսերական Գերմանիայի մեղսակցությունը:

Ըստ Տ. Դևոյանի՝ ռուսական Կովկասյան բանակի շտաբը տեղյակ էր հակառակորդի գրեթե բոլոր տեղաշարժերի, համայրման և սպառազինության մասին: Նա նշում է, որ իրենք պարբերաբար տեղեկություններ էին ստանում դասալիքների և գործակալների միջոցով: Նրանց տեղեկությունները ստուգելու կամ ճշտելու համար բանակային հրամանատարությունը հետախուզական հեծելախմբեր էր ուղարկում ռազմաճակատի այս կամ այն տեղամասը՝ հրամայելով բերել «լեզու»՝ գերել հակառակորդի առաջապահ

⁴³ Տ. Դե յ ա ն ց. Հետախույզի մը հուշերը. – «Վեմ», 1938, թիվ 2, էջ 51–52: Տ. Դևոյանի մասին տե՛ս Վ. Հ. Վ ի Ր ա բ յ ա ն. Տիգրան Դևոյանցի հետախուզական գործունեության շուրջ. – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2010, -1–2, էջ 320–335:

⁴⁴ ՀԱԱ, ֆ. 818, ց. 1, գ. 533, թ. 23:

⁴⁵ Տ. Դե յ ա ն ց. Հետախույզի մը հուշերը. – «Վեմ», 1938, թիվ 3, էջ 60:

⁴⁶ В. Николаи. Тайные силы. Интернациональный шпионаж и борьба с ним во время мировой войны и в настоящее время. – http://militera.lib.ru/h/nicolai_w/index.html

դիրքերից որևէ զինվորի կամ սպայի: Այդ կերպ կարողանում էին համադրել և ստուգել ստացված բոլոր տեղեկությունները:

Որևէ բնակավայր գրավելիս հետախուզական բաժանմունքի աշխատակիցներն առաջին հերթին ստուգում էին թուրք սպաների բնակության վայրերը՝ աշխատելով հավաքել նրանցից հետո մնացած փաստաթղթերը, հեռագրերի պատճենները և պատճենահանող թղթերը: Բացի այդ, «Բոլոր դաշնակից պետությունները իրենց ստացած լուրերը թուրք բանակի շարժումներու մասին իրենց ներկայացուցիչի միջոցով ամեն օր կը հաղորդեին մեր բանակի սպայակոյտին»⁴⁷: Հակառակորդի զորքերի մարտակազմի, սպառազինության և մատակարարման, ինչպես նաև հրամանատարության ծրագրերի վերաբերյալ հիմնական տեղեկությունները ստացվում էին ռազմագերիներից, տեղական բնակչությունից, փախստականներից և հետախույզներից: Հատկապես արժեքավոր էին ռազմագերիներից ստացված հետախուզական տեղեկությունները, որոնք կազմում էին ընդհանուր տեղեկությունների 3/4-ը⁴⁸:

Գերմանական Գլխավոր շտաբը մեծ տեղ էր հատկացնում ռուսների թիկունքում դիվերսիոն-հետախուզական խմբերի գործունեությանը և ձգտում էր ավելացնել ու ակտիվացնել քայքայիչ և դիվերսիոն գործունեություն ծավալող, կովկասցի տեղաբնիկներից կազմված ստորաբաժանումների գործունեությունը: Վերջիններս ապաստարանական լայնածավալ ելույթներով պետք է ապակայունացնեին թիկունքը՝ հրահրելով վրաց և մահմեդական բնակչությանը խռովարարական ելույթների: Այս խնդրում գերմանացիներին լուրջ աջակցություն են ցույց տալիս արտասահմանում գտնվող վրաց վտարանդիներ, սոցիալ-ֆեդերալիստներ՝ Միխայիլ Ծերեթելին, Վահրամ Չերքիզիշվիլին, Գեորգի Մաչաբելին, Լեո Կերեսելիձեն և կովկասցի թաթարներ Ա. Ադանը, Հուսեյինգադեն և ուրիշները: Վրացիները կազմակերպում են Վրաստանի անկախության կոմիտե և 1914 թ. վերջին հիմնավորվում Կ. Պոլսում⁴⁹:

Գերմանացիների նպատակն էր Կովկասում հրահրել անջատողական շարժումներ: Ինչպես նշում է ռուսաստանցի պատմաբան և քաղաքագետ Ա. Ի. Ուտկինը, Գերմանիայի համար առավել ցանկալի թիրախը Վրաստանն էր: Կ. Պոլսում կազմակերպվում է հատուկ ֆոնդ, որի միջոցով նպատակ էր դրված Վրաստանին հանել Ռուսաստանի դեմ: Վերը հիշատակած վրաց վտարանդիները ցանկանում էին գերմանացիների օգնությամբ հասնել Վրաստանի անկախությանը⁵⁰:

Պատերազմի սկզբում Կ. Պոլսում թուրքերը բանակցություններ են վարում վրացի վտարանդի որոշ գործիչների հետ: Թուրքերը նրանց «ոգևորելու»

⁴⁷ S. T e n j a ն ց. Հետախույզի մը հուշերը.– «Վեմ», 1938, թիվ 3, էջ 61:

⁴⁸ Л. К о р з у н. Разведка в русской армии в Первой мировой войне.– «Военно-исторический журнал», 1981, 1 4, с. 63.

⁴⁹ Г. В. П и п и я. Германский империализм в Закавказье в 1910–1918 гг. М., 1978, с. 37. Ավելի մանրամասն տե՛ս Ա. Ն. З а к а р я н. Малоизвестный исторический документ (Грузино-турецкое соглашение 1914 г.)– «Историко-филологический журнал», 2005, 1 3, с. 254–257.

⁵⁰ А. И. У т к и н. Забытая трагедия. Россия в первой мировой войне. Смоленск, 2000, с. 192–193.

նպատակով ճանաչում են Վրաստանի անկախությունը և նույնիսկ գծում այդ պետության սահմանները. արևմուտքում լինելու է Ճորոխ գետը, իսկ արևելքում՝ Սևանա լճից մինչև Դադաստան ընկած տարածքները: Ինչպես նշում է Հր. Միմոնյանը, «Այսպիսով, թուրքերը հայերի հետ Էրզրումում (ի նկատի ունի 1914 թ. հուլիսի 25-ից մինչև օգոստոսի 17-ը Էրզրումում կայացած ՀՅԴ Ը (VIII) Ընդհանուր ժողովը – Ռ. Ս.) չէին կարողացել լեզու գտնել, բայց Պոլսում վրացիների հետ՝ կարողացել էր»⁵¹:

Գերմանիայի արտաքին գործերի նախարարությունը 1915 թ. հանձնարարում է Վ. ֆոն Շուլենբուրգին ղեկավարել հատուկ նախագիծ՝ «Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից և նրա հետագա քաղաքական կազմակերպումը»: Այս փաստաթղթի հեղինակներն էին Գերմանիայում գտնվող վրաց սոցիալ-ֆեդերալիստների Գեորգի Մաչաբելին և Միխայիլ Ծերեթելին: Նշված նախագծի համաձայն՝ նախատեսվում էր Գերմանիայի ենթակայության ներքո Անդրկովկասում հիմնել «Կովկասյան Շվեյցարիա»: Վ. ֆոն Շուլենբուրգը եռանդով սկսում է գործել: Նրան հանձնարարվում է. ա) Կովկասում հրահրել հակառուսական տրամադրություններ և խռովություններ, բ) հաստատել համագործակցություն վրացական «Անկախության կոմիտեի» և թուրքական հրամանատարության միջև՝ Կովկասում համատեղ ուժերով ապստամբություններ կազմակերպելու համար, գ) կապի հաստատում ապստամբների և գերմանական ու թուրքական համապատասխան գերատեսչությունների, ինչպես նաև մյուս կազմակերպությունների հետ, որոնք նմանապես հետապնդում են «ազատագրական» նպատակներ, դ) Կովկասի և հարակից շրջանների վերաբերյալ հետախուզական բնույթի տեղեկատվության հայթայթում և հաղորդում⁵²:

Գերմանական հետախուզությունն իր կենտրոնատեղին դարձնում է Շվեդիայի մայրաքաղաք Ստոկհոլմը⁵³: Այստեղից Անդրկովկաս ուղարկվեց մեծ քանակությամբ դրամ՝ երկրամասում ապստամբական շարժումներ կազմակերպելու համար: Այս աշխատանքները կորոդինացնում էր Վ. ֆոն Շուլենբուրգը⁵⁴: Կովկասում հակառուսական ուժերի ընդհանուր ղեկավարությունն իրականացնում էր Թուրքիայում Գերմանիայի դեսպան Հ. ֆոն Վանզենհեյմը: Վ. ֆոն Շուլենբուրգը կարողանում է կազմակերպել 750 հոգուց կազմված կամավորական ջոկատ և փորձում է վերականգնել կապերն Անդրկովկասում մնացած գործակալների հետ⁵⁵:

⁵¹ Հր. Միմոնյան. Անդրանիկի ժամանակը, երկու գրքով, գիրք Ա, Երևան, 1996, էջ 373:

⁵² С. Тарасов. Նշվ. աշխ.:

⁵³ Գերմանական հետախուզության կողմից պատահական չէր ընտրված Ստոկհոլմը որպես կենտրոնատեղի: Ռուս դիվանագետներին և զինվորականներին հայտնի էին շվեդական կառավարության, զինվորականության և ազնվականության գերմանամետ տրամադրությունները: Այդ հանգամանքը լրացուցիչ ապահովություն էր տալիս գերմանացի հետախույզներին իրենց հետախուզական գործողությունները կատարելիս (տե՛ս В. А. Карелин. Նշվ. աշխ., էջ 53):

⁵⁴ Г. В. Пипия. Նշվ. աշխ., էջ 66–67:

⁵⁵ Նույն տեղում, էջ 67: Գերմանացիները շարունակում են վրացիների հովանավորությունը նաև 1918 թ. թուրքական արշավանքի ժամանակ: Ինչպես ասվեց, նրանք, հանձին Վրաստանի, տեսնում էին իրենց հենարանը Կովկասում: Այդ էր պատճառը, որ գերմանացի և վրացի զինծառայողները համատեղ մասնակցում են թուրքական զորքի դեմ մղված մարտական գործողություններին: Թուրքերը գերում են մի խումբ գերմանացի զինվորների, որոնց գնդակահարում են (տե՛ս Վ.

Բեռլինից Կ. Պոլիս են գործուղվում վրացական «Անկախության կոմիտեի» անդամներ Միխայիլ Ծերեթելին, Վառլամ Չերքեզիշվիլին, Գեորգի Մաչաբելին, Լեո Կերեսելիձեն և ուրիշներ⁵⁶:

Ստոկհոլմում էր գտնվում գերմանական հետախուզության կենտրոններից մեկը, որը զլխավորում էր Շվեդիայում Գերմանիայի դեսպան Հենրիխ Լյուցիուս ֆոն Շտեդտենը⁵⁷: Բեռնի և Կոպենհագենի իր գործընկերների հետ վերջինս ղեկավարում էր փտարանդի, հակառուսական և հակաբրիտանական տրամադրություններ ունեցող, հպատակ ազգային փոքրամասնությունների շրջանում քայքայիչ աշխատանքները: Գերմանացիները փորձում էին «հեղափոխականացման» միջոցով հասնել երկու կայսրությունների՝ Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի քայքայմանը: Գերմանական հետախուզությանը հաջողվում է հատկապես արդյունավետ գործել Ռուսաստանի դեմ: Այդ նպատակով 1916 թ. մարտին Շվեյցարիայում կազմակերպվում է «Ռուսաստանի ոչ ռուս ժողովուրդների լիգան», որն իր մասնաճյուղերն ուներ նաև Շվեդիայում ու ԱՄՆ-ում: Նշենք, որ հայ քաղաքական և հասարակական կազմակերպություններից ոչ մեկը չանդամակցեց լիգային:

Լիգայի հիմնական ոգեշնչողների թվում էին Հ. ֆոն Վանգենհեյմը, գերմանական հետախուզության գործակալ, սոցիալ-դեմոկրատ Իգրայիլ Լազարի Գելֆանդը, որը միջազգային շրջանակներում հայտնի է Ալեքսանդր Պարվուս անվամբ⁵⁸: Նա մեծ հարստություն էր կուտակել՝ թուրքական բանակին զենք և զինամթերք մատակարարելով: Ա. Պարվուսը վերը նշված նպատակների համար գերմանական հատուկ ծառայություններից ստացել էր 2 միլիոն մարկ, այսպես 20 միլիոն ռուբլի⁵⁹: Նա սերտ կապեր ուներ երիտթուրքական կուսակցության և օսմանյան կառավարության հետ: Իր առաջնահերթ խնդիրներից էր համարում ռուսների դեմ տրամադրված վրացիների միջոցով Կովկասում ապստամբություն բարձրացնելը: Ինչպես վկայում են արխիվային փաստաթղթերը, լիգայի հետ համագործակցել է նաև բրիտանական հետախուզությունը⁶⁰, որն օգտագործել է նրա մարդ-

Բ ա ռ Վ. Քրիստոնյաների վիճակը Թուրքիայում Առաջին աշխարհամարտի ավարտին (1917–1918). – «Էջմիածին», Գ, 2010, էջ 143):

⁵⁶ С. Т а р а с о в. Նշվ. աշխ.:

⁵⁷ Ռ. Օ. Ս ա հ ա կ յ ա ն. Փաստաթղթեր Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Կովկասյան բանակի հետախուզական ծառայությունների գործունեության մասին. – «Բանբեր Հայաստանի արխիվների», 2009, - 2, էջ 54:

⁵⁸ Ա. Պարվուսին անվանում էին «Ռուսական հեղափոխության վաճառական» (տե՛ս Ս. В. М а к а р е н к о. Германский фактор в Октябрьской революции. – «Вопросы истории», М., 2008, 1 5, с. 31):

⁵⁹ Первая мировая война. Пролог XX века. М., 1999, с. 424. Ա. Պարվուսը Ստոկհոլմում հիմնում է «Համաշխարհային պատերազմի պատճառների և հետևանքների հետազոտության ինստիտուտ»: Կարելի է ենթադրել, որ «գիտական» հաստատությունը գործում էր գերմանական հետախուզության տրամադրած ֆինանսական միջոցներով և վերջինիս հետախուզական ու վերլուծական կենտրոններից մեկն էր: Բնաստիտուտում «աշխատում» էին նաև բոլշևիկները:

⁶⁰ Բրիտանական հետախուզությունն ուշի ուշով հետևում էր Եվրոպայում գործող ռուսական ու ֆրանսիական հետախուզությունների գործակալներին և որոշ դեպքերում միջամտում էր նրանց գործերին: Այսպես՝ 1917 թ. ռուսական և ֆրանսիական հետախուզությունները որոշում են համատեղ ուժերով հափշտակել Մադրիդում հետախուզական լայն գործունեություն ծավալած գերմանական ռազմածովային կցորդ Հ. ֆոն Կրոնին: Բրիտանական հետախուզությունը կա-

կանց՝ Ռուսաստան հեղափոխություն «ներմուծելու» և երկիրը ներսից քայքայելու համար: Ռուսաստանը հեղափոխականացնելու նպատակով Ա. Պարվուսը ցանկանում էր օգտագործել ՌՄԴԲ կուսակցության ծայրահեղ ձախակողմյան անդամներին, էսէռներին և այլ կուսակցությունների անդամներին: Ուստի, պատահական չպետք է համարել, որ գերմանական Գլխավոր շտաբը և հետախուզությունը շտապում են օգտվել այդ հնարավորությունից⁶¹: Հ. ֆոն Վանզենհեյմը կազմակերպում է գերմանական կողմի համագործակցությունը Ա. Պարվուսի հետ: Վերջինս 1915 թ. մարտին ներկայացնում է մանրամասն զեկուցագիր, թե ինչպես հեղափոխականացնել Ռուսաստանը: Նշված գաղափարն ակտիվորեն կյանքի է կոչում Գերմանիայի պետական քարտուղարի տեղակալ Արթուր Ցիմմերմանը⁶²:

Վերջին տասնամյակում գիտական շրջանառության մեջ են դրվում արխիվային նորահայտ վավերագրեր, որոնք վկայում են բոլշևիկյան մի շարք գործիչների և գերմանական Գլխավոր շտաբի ուղղակի, ինչպես նաև անուղղակի համագործակցության մասին: Պատերազմի տարիներին այդ համագործակցության բացահայտման գործում զգալի աշխատանք է կատարում ֆրանսիական հետախուզությունը: Վերջինիս ուշադրության կենտրոնում է հայտնվում Յ. Ս. Ֆյուրստենբերգ-Գանեցկին, որը հանդիսանում էր Ստոկհոլմում բոլշևիկյան ԿԿ-ի արտասահմանյան ներկայացուցչության անդամ: Ֆրանսիական հետախուզությունը պարզում է, որ նա 1916 թ. զարնանից ստոկհոլմյան “Nya Banken”-ի հաճախորդն է: 1917 թ. հունվարի 30-ից մինչև հունիսի 8-ը նրա անունով փոխանցվում է 416 հազար ռուբլի: Նշենք, որ գերմանական հետախուզության կողմից, տարբեր բանկերից և տարբեր ժամանակներում Ռուսաստան է փոխանցվում 37 միլիոն ռուբլի: Գումարը ստանում են ոչ միայն բոլշևիկները, այլև հակամիապետական ուղղվածություն ունեցող կուսակցությունները⁶³:

Թուրքական հետախուզությանը հաջողվում է կապ հաստատել վրացական դրուժինաների հենքի վրա կազմավորված հետևակային գումարտակի որոշ զինծառայողների հետ: Դա բացահայտվում է Պրիմորսկյան ջոկատի (Կովկասյան I բանակային կորպուս) հրամանատար, գեներալ Վ. Պ. Լյախովի կողմից: Այդ իսկ պատճառով գումարտակը տեղափոխվում է Պարսկաստան՝ Ադրբեջանական ջոկատ⁶⁴:

Գերմանական և թուրքական հետախուզությունների գործակալները Ռուսաստանում գործում էին այս կամ այն բարեգործական կազմակերպություններում⁶⁵: Դա հնարավորություն էր տալիս նրանց պատերազմից տուժած մահմեդական բնակչությանն «օգնություն» ցուցաբերելու անվան տակ լինել ռազմաճակատի տարբեր տեղամասերում, վերականգնել մարտական գործողությունների

րողանում է կազմակերպել ավտոլթար և դրանով խափանել օպերացիան (տե՛ս В. А. А в д е е в, В. Н. К а р п о в. Из революционеров в разведчики.– «Военно-исторический журнал», 2008, 1 4, с. 56–57):

⁶¹ Первая мировая война. Пролог XX века, с. 247.

⁶² Նույն տեղում, էջ 423:

⁶³ Մանրամասն տե՛ս С. С. П о п о в а. Французская разведка ищет «германский след».– Первая мировая война: дискуссионные проблемы истории. М., 1994, с. 264–273.– <http://august-1914.ru/popova.html>

⁶⁴ Նույն տեղում, էջ 211:

⁶⁵ ՀՄԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 70, թ. 5–7:

ընթացքում խաթարված կապը, տալ հրահանգներ և հավաքել հետախուզական բնույթի տեղեկություններ:

Գեներալ Ե. Վ. Մասլովսկու կարծիքով, գերմանական հետախուզությունը մեծ քանակությամբ գործակալներ ուներ Պարսկաստանում⁶⁶: Համանման վկայություններ կան գեներալ Թ. Նազարբեկյանի (Ֆ. Նազարբեկով) հուշերում⁶⁷: Ե. Վ. Մասլովսկին, սակայն, չի նշում, թե ինչպիսի հակամիջոցներ է ձեռնարկում ռուսական հետախուզությունը և հակահետախուզությունը: Նա միայն հայտնում է, որ գերմանական հետախուզության աշխատանքներն ակտիվանում են հատկապես 1915 թ. սկզբին: Նշված աշխատանքների համար գերմանացիները հատկացնում են դրամական զգալի միջոցներ, հիմնականում ոսկի⁶⁸: Սահմանամերձ շրջանների՝ Արարատ լեռան վրա, Աբադայում, Սարայում, Բաշկալեում և Խոշարում քրդական գործողությունների փաստական դեկավարը Մակուի սարդարն էր⁶⁹: 1915 թ. կեսերից Պարսկաստանում հետախուզական և քայքայիչ դիվերսիոն աշխատանքները գլխավորում է գեներալ, կոմս Հանս ֆոն Կանիցը⁷⁰: Նա ձգտում էր ակտիվացնել վերը նշված աշխատանքները: Ե. Վ. Մասլովսկին նրան անվանում է «Գերմանական գլխավոր շտաբի տաղանդավոր սպա»⁷¹: Պարսկաստանը միաժամանակ հենարան էր գերմանացիների համար Միջին Ասիա թափանցելու և այնտեղ հակառուսական ապստամբություն հրահրելու համար⁷²: Նշված գործողությունը հաջողվում է իրականացնել 1916 թ. վերջին և 1917 թ. սկզբին⁷³: Ի դեպ, 1915 թ. դեկտեմբերի 15-ին Հ. ֆոն Կանիցը նախատեսում էր Պարսկաստանում պետական հեղաշրջում կատարել⁷⁴: Գերմանական հետախուզությունն այստեղ է գործուղում էմիր Նաջիին, լեյտենանտ Էրվին Շոյբներ-Ռիխտերին, մեկ վաշտ և երկու թնդանոթ⁷⁵:

Ըստ ռուսական հակահետախուզության 1917 թ. նոյեմբերի 27-ի հաղորդման՝ Կովկասում հետախուզական գործունեություն էր կատարում «Մահմեդական բարեգործական կազմակերպության» նախագահ, թուրքական լրտես Խոսրով բեկ Սուլթանովը (հետագայում՝ 1920 թ. Շուշիի հայ բնակչության կոտորածի

⁶⁶ Е. В. Масловский. *Նշվ. աշխ.*, էջ 213:

⁶⁷ ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 2, թ. 3 և շրջ.:

⁶⁸ Е. В. Масловский. *Նշվ. աշխ.*, էջ 214:

⁶⁹ Ռ. Օ. Սահակյան. *նշվ. հոդվ.*, էջ 48:

⁷⁰ Պարսկաստանում գերմանաթուրքական հետախուզության գործունեության մասին ավելի մանրամասն տե՛ս А. В. Шишов. Персидский фронт (1909–1918). Незаслуженно забытые победы. М., 2010. – <http://www.fedy-diary.ru/html/112010/20112010-08a.html>

⁷¹ Е. В. Масловский. *Նշվ. աշխ.*, էջ 214:

⁷² А. И. Уткин. *Նշվ. աշխ.*, էջ 192:

⁷³ Первая мировая война. Пролог XX века, с. 246.

⁷⁴ Е. В. Масловский. *Նշվ. աշխ.*, էջ 215:

⁷⁵ Н. Г. Корсун. Алашкертская и Хамаданская операции, с. 154. *Նշենք, որ Է. Շոյբներ-Ռիխտերը տոհմիկ ազնվական էր և այն անձնավորությունն էր, որ գերմանական արդյունաբերողների ու բանկիրների շրջան մտցրեց Ադուլֆ Շիկլգրուբերին՝ Հիտլերին: 1923 թ. նոյեմբերի 9-ի մյունխենյան խռովության ժամանակ նա սպանվում է ֆաշիստների կազմակերպած ցույցի ժամանակ, երբ Ա. Հիտլերին թևանցուկ արած քայլում էր ցուցարարների առաջին շարքում (տե՛ս Ռ. Օ. Սահակյան. Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին, Երևան, 2005, էջ 8):*

կազմակերպիչ): Օգտագործելով իր պաշտոնական դիրքը՝ նա հնարավորություն է ունենում լինել ռազմաճակատի տարբեր հաստիվածներում՝ պատերազմից տուժած մահմեդականներին «օգնելու» պատրվակով:

Ե. Վ. Մալովսկին վկայում է, որ ռուսական Գլխավոր շտաբի սպաների կողմից կատարվել էր ահռելի աշխատանք հակառակորդի զինուժի վերաբերյալ տեղեկություններ հայթայթելու համար: Նրանք հետախուզական հիմնական տեղեկությունները ստանում էին Թուրքիայում բնակվող հայերից: Պատերազմի նախօրյակին, սակայն, Կովկասյան բանակի հետախուզական ծառայությունը գլխավորում է նորանշանակ մի սպա, որն արմատապես փոխում է արդեն երկար ժամանակ ստեղծված հետախուզական տեղեկությունների հավաքման համակարգը՝ փոխարենը չստեղծելով նորը: Նման վերաբերմուքի արդյունքները երկար սպասել չեն տալիս. մարտական գործողությունների սկզբնական փուլում ռուսական բանակային հետախուզությունը հիմնականում չի կարողանում ապահովել համապատասխան տեղեկություններով հրամանատարությանը հակառակորդի տեղաշարժի, սպառազինության և կարևոր այլ հարցերի վերաբերյալ: Ինչպես նշում է գեներալ Ե. Վ. Մալովսկին, «Այդ հանգամանքը արտակարգ ծանր անդրադարձավ շտաբի աշխատանքների վրա՝ դժվարացնելով անհրաժեշտ գործալալային տեղեկատվության ժամանակին ստացումը»⁷⁶:

Երբ գեներալ Ն. Ն. Յուդենիչի առաջարկով ստեղծվում է Կովկասյան բանակի առանձին, դաշտային շտաբը, նրա գեներալ-կվարտիրմեստեր է նշանակվում գեներալ Ս. Վ. Տոմիլինը: Շտաբի հետախուզական բաժանմունքի պետն էր գնդապետ Դ. Պ. Դրացենկոն: Նրա օգնականներից էր կապիտան, սպա փոխգնդապետ (հետագայում՝ գեներալ) Բ. Ա. Շտեյֆոնը: Թիֆլիսում՝ Գլխավոր շտաբում, մնում է ենթակեսառու Դուլցևը⁷⁷: Մակայն հետախուզությունը միշտ չէ, որ կարողանում էր ստույգ տվյալներ հայթայթել հակառակորդի զինուժի մասին: Ինչպես հետագայում պարզվում է, թուրքերը ռուսներին գերազանցում էին լեռնային հրետանիով⁷⁸:

Ռուսական հետախուզությունը սին հույսեր էր կապում քուրդ ցեղապետ Սիմկոյի հետ: Նրան ընդունում էին որպես հեղինակավոր ցեղապետ, պատվում էին ընդունելություններով, պարգևատրում էին շքանշաններով և վճարում աշխատավարձ, իսկ նրա ցեղին գենք էին մատակարարում: Սիմկոն, օգտվելով բոլոր բարիքներից, ռուսներին տրամադրում էր կեղծ տեղեկություններ թուրքերի մասին, իսկ 1914 թ. դեկտեմբերին անցնում է թուրքերի կողմը: Սարիղամիշի ճակատամարտում թուրքերի խայտառակ պարտությունից հետո վերադառնում է ռուսների մոտ և սկսում կռվել թուրքերի դեմ:

Համանման վարքագիծ է դրսևորում Աբդուրրեզակը կամ Աբդուլ Ռեզակը: Նա երկար տարիներ գտնվելով արտասահմանում՝ ապրում էր Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության կողմից տրվող գումարի հաշվին: 1914 թ. սեպտեմբերին Աբդուրրեզակը Ֆրանսիայից ժամանում է Թիֆլիս, որտեղից նրան ու-

⁷⁶ Е. В. Масловский. Նշվ. աշխ., էջ 47–48:

⁷⁷ Նույն տեղում, էջ 139:

⁷⁸ Նույն տեղում, էջ 234:

դարկում են Մակու: Տեղի ռուսական հյուպատոս Ս. Ն. Օլֆերներ պետք է կազմակերպեր Արդուրրեզակի և մեկ այլ քրդի՝ Մուստաֆա բեյի անցումը Թուրքիա⁷⁹: Նրանք պետք է կազմակերպեին Բոհտանի քրդերի ապստամբությունը: Դա, սակայն, նրանց չի հաջողվում: Պարզվում է, որ այդ քրդերի խոստումներն ու հավաստիացումները քրդական ապստամբության մասին դատարկ խոսակցություններ էին: Նրանք իրենց ցեղակիցների շրջանում որևէ հեղինակություն չէին վայելում: Մուստաֆա բեյը ռուսներից Մակուի շրջանում ստացել էր հող, փող և զենք: Միակողմի նման նա 1914 թ. դեկտեմբերին անցավ թուրքերի կողմը և կովեց գեներալ Ա. Մ. Նիկոլյանի Բայազետի (Անդրկասպյան կազակային բրիգադ) ջոկատի դեմ⁸⁰:

Էրզրումը և Երզնկան ռուսների գրավելուց հետո տեղի և շրջակա մահմեդական գյուղերում թաքնվում են զգալի թվով թուրք զինծառայողներ: Նրանք, քողարկվելով քաղաքացիական բնակչության անվան տակ, իրականացնում են դիվերսիոն-հետախուզական աշխատանքներ⁸¹:

1916 թ. ամռանը Թիֆլիսում հայտնաբերվում է գերմանական հետախուզական կենտրոն: Ըստ որոշ տեղեկությունների, լրտեսական խմբի անդամներ են եղել փոխարքայի համհարզ Մենզեն, թանգարանի աշխատակից, դոկտոր Շուլցը և ուրիշներ⁸²:

Ինչպես հայտնի է, Կովկասյան բանակի կազմում 1914–1916 թթ. գործում էին հայ կամավորական ջոկատներ՝ թվով ութ (մեկը պահեստային էր և տեղակալված էր Քանաքեռում): Նրանց կազմում կային հետախույզների առանձին ստորաբաժանումներ: Վերջիններիս հետախուզական աշխատանքից էր կախված խմբերի հրամանատարների հետագա որոշումները:

Հայկական կամավորական հետախուզական ստորաբաժանումներն աչքի են ընկնում 1914 թ. դեկտեմբեր – 1915 թ. հունվար ամիսներին Մարիդամիշի օպերացիայի ժամանակ: Հատկապես աչքի են ընկնում Անդրանիկի I և Քեռու IV խմբերի հետախույզները: I խմբի հետախույզները 1914 թ. նոյեմբեր–դեկտեմբեր ամիսներին կարողանում են կարևոր տեղեկություններ հայթայթել թուրք-քրդական ուժերի տեղակայման և սպառազինության մասին: Նրանց տեղեկությունների շնորհիվ հնարավոր է լինում հայտնաբերել շրջանցիկ ուղիներ և մի քանի բնակավայրեր գրավել նվազագույն կորուստներով: Մարիդամիշյան ճակատամարտի սկզբնական փուլում Քեռու հետախույզներն առաջիններից էին, որ զեկուցեցին թուրքական գերակշիռ ուժերի հայտնվելու մասին: Ստացված տեղեկությունը Քեռին շտապում է հայտնել Կովկասյան I բանակային կորպուսի հրամանատար, գեներալ Գ. Է. Բերխմանին: Նա, սակայն, անուշադրության է մատնում այդ կարևոր տեղեկությունը, գտնելով, որ ռեյիեֆի և բնակլիմայական նման պայմաններում հակառակորդը չի կարող հարձակողական

⁷⁹ ՀԱՍ, ֆ. 1267, ց. 1, գ. 3, թ. 25:

⁸⁰ Նույն տեղում, թ. 26:

⁸¹ Ռ. Օ. Մ ա հ ա կ յ ա ն. նշվ. հոդվ., էջ 49:

⁸² ՀԱՍ, ֆ. 503, ց. 1, գ. 61, թ. 8:

լայնածավալ գործողություն ծավալել⁸³: Ինչպես հետագայում պարզվեց, Քեռու խմբի ուղղությամբ շարժվում էին թուրքական X բանակային կորպուսի առաջապահ զորամասերը: Այդ կորպուսի մասին ռուսական բանակային հետախուզությունը որևէ տեղեկություն չունեի:

Սարիղամիշի շրջանում ծանր պարտություն կրելուց հետո թուրքական հրամանատարությունը որոշում է Հյուսիսային Պարսկաստանի Դիլման քաղաքի շրջանում ջախջախել ռուսական զորքերին և ներխուժել ռուսական սահմանամերձ շրջաններ, որտեղ գերակշռում էր մահմեդական բնակչությունը: 1915 թ. ապրիլի 18-ին տեղի է ունենում Դիլմանի նշանավոր ճակատամարտը: Ռուսական ուժերի հրամանատարն էր Կովկասյան II բրիգադի հրամանատար, գեներալ Ֆ. Բ. Նազարբեկովը: Ճակատամարտում վճռորոշ դեր է ունենում Անդրանիկի հանձնարարությամբ հետախուզական առաջադրանքով Դիլմանի ուղղությամբ առաջացող Մմբատ Բորոյանի հրամանատարության ներքո գտնվող վաշտը: Այս փաստը վկայում է Անդրանիկի կողմից հետախուզությանը տրվող կարևոր նշանակության մասին:

Բանակային հետախուզությունը վճռորոշ դեր ունեցավ Էրզրումի օպերացիայի ժամանակ: 1915 թ. աշնանը ռուսական հրամանատարությունը, տեղեկանալով, որ դաշնակիցները՝ Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան, ցանկանում են ավարտել Դարդանելյան օպերացիան (որը սկսվել էր 1915 թ. փետրվարի 19-ին և ավարտվել էր 1916 թ. հունվարի սկզբներին, որը նպատակ ուներ գրավել Դարդանելի և Բոսֆորի նեղուցները), որոշում է օգտվել հարմար առիթից և գրավել Էրզրում ամրոցը: Ռուսների շտապելը հասկանալի էր: Նրանք գիտեին, որ թուրքական հրամանատարությունը կշտապի Դարդանելի շրջանից զորքերը տեղափոխել ռուս-թուրքական ռազմաճակատ և 1916 թ. գարնանը կնախաձեռնի լայնածավալ հարձակում: Ուստի, անհրաժեշտ էր մինչև օգնական ուժերի ժամանումը գրավել Փոքր Ասիայում թուրքերի ունեցած գլխավոր հենակետը՝ Էրզրում ամրոցը:

Կովկասյան բանակի հրամանատար, գեներալ Ն. Ն. Յուդենիչը նախաձեռնում է քաղաք-ամրոցի գրավման օպերացիան: Նրա մտահոգումը հանդիպում է Կովկասի փոխարքա, Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար, մեծ իշխան, գեներալ Նիկոլայ Ռոմանովի ընդդիմությանը: Մեծ իշխանը հասկանում էր, որ բնակլիմայական նման պայմաններում օպերացիայի իրականացումը հղի է լուրջ փտանգներով: Նա, միաժամանակ լինելով փորձված պալատական գործիչ, օպերացիայի ողջ պատասխանատվությունը դնում է Ն. Ն. Յուդենիչի վրա: Ն. Ն. Ռոմանովին անհանգստացնում էր այն փաստը, որ օպերացիային մասնակցում է ռազմաճակատում

⁸³ Е. В. Масловский. 2-й. а.շ.и., էջ 82: Ինչպես նշում է գեներալ Ն. Գ. Կոբուսևը, «Այդ դրուժինայի հրամանատարը (Քեռին – Ռ. Ս.) ժամանակին զեկուցեց իր նահանջի մասին՝ գնահատելով թուրքերի ուժը մինչև երկու գումարտակ: Բմանալով այդ ուղղությամբ գործողությունների ղեկարարությունն ընդհանրապես, իսկ ձևովը հատկապես, Բերիսմանը ուշադրություն չի դարձնում՝ այստեղ (հարձակման տեղամասում – Ռ. Ս.) հետևակային գնդի հայտնվելու վրա և այդ տվյալները չի համեմատում նախօրյակին ունեցած հետախուզական տեղեկությունների հետ» (տե՛ս Н. К о р с у н. Сарыкамышская операция на Кавказском фронте, с. 39):

գտնվող ռուսական զինուժի 83%-ը⁸⁴: Չնայած լուրջ և ծանրակշիռ հաջողություններին՝ Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարը վստահ չէր օպերացիայի հաջողության վրա: Այդ կարծիքը մեծ իշխանի մեջ արմատավորել էր նրա խորհրդական, Գլխավոր շտաբի նախկին պետ, գեներալ Ֆ. Ֆ. Պալիցինը: Վերջինս գերազանց տեղեկացված էր ամրոցի սպառազինության և պաշտպանվելու հնարավորությունների մասին, այդ իսկ պատճառով խելահեղություն էր համարում ամրոցի գրոհը⁸⁵: Ունկնդրելով գեներալի նախագրուշացումներին՝ Ն. Ն. Ռոմանովը հրամայում է դադարեցնել օպերացիան և վերադառնալ ձմեռային բնակարանները՝ Քյոփրիքոյ⁸⁶: Ն. Ն. Յուդենիչը ենթարկվում է հրամանին և ուղարկում է երկու սպայի՝ գնդապետ (հետագայում գեներալ) Ե. Վ. Մասլոփսկուն և փոխգնդապետ (հետագայում գեներալ) Բ. Ա. Շտեյֆոնին՝ կազմակերպելու նահանջը: Սակայն նրանք, տեղում ուսումնասիրելով իրադրությունը, գալիս են այն եզրակացության, որ անհրաժեշտ է օպերացիան շարունակել⁸⁷:

Հավանաբար, վերջնական որոշումն ընդունելու համար վճռորոշ նշանակություն ունեցավ 1916 թ. հունվարի 28-ի գիշերը ռուսական ջոկատի (որի կազմում էին թուրքերենին տիրապետող տեղացի հայ և ասորի կամավորներ) անցումը հակառակորդի թիկունքը: Ջոկատը գերում է թուրքական 38-րդ դիվիզիայի պետին, շտաբի ութ սպայի, հրետանու պետին և այլոց: Վերադարձի ճանապարհին ռուսները գերում են հակառակորդի մոտ երկու հարյուր զինվոր և գրավում երեք թնդանոթ⁸⁸:

Էրզրումի գրավումից հետո ռուսական հրամանատարությունը թույլ է տալիս կոպիտ սխալ, քանզի որոշում է ռազմագերիներին օգտագործել պաշտպանական ամրությունները վերականգնելու և այլ աշխատանքների համար: Որոշ ժամանակ անց նրանք ազատ են արձակվում և մնալով քաղաքում որպես քաղաքացիական բնակչություն՝ կապեր են հաստատում թուրքական հետախուզության հետ՝ հաղորդելով զանազան տեղեկություններ: Նրանք նույնիսկ զգուշացնում են քաղաքի բնակչությանը նախատեսվող օդային հարձակման մասին, որպեսզի ազգակիցները հնարավորություն ունենան թաքնվել⁸⁹:

⁸⁴ А. Ф. М е д в е ц к и й. Герой Эрзерума: проклятый и преданный забвению. Самара, 2005, с. 73.

⁸⁵ Նույն տեղում, էջ 21:

⁸⁶ В. В. М и х а й л о в. Разгром турецкой армии и овладение первоклассной крепостью. Эрзерумская операция 1915–1916 гг. – «Военно-исторический журнал», 2006, 18, с. 49–53.

⁸⁷ Նույն տեղում, էջ 51–52:

⁸⁸ Նույն տեղում, էջ 52: Տե՛ս նաև Գ. В. П и п и я. Նշվ. աշխ., էջ 76: 1916 թ. փետրվարի 23-ին Ազգային բյուրոյին ներկայացրած զեկուցումում Հովսեփ Խունունցը տեղեկացնում է մեկ այլ ցավալի փաստի մասին: Գարինը գրոհող ռուսական զորքի կազմում եղել է հայ հետախույզներից և ուղեկցողներից կազմված խումբ: Նրանք ռուսական հրամանատարությանն անգնահատելի օգնություն են ցույց տալիս, որը, սակայն, չի գնահատվում: Գարինը գրավելուց հետո հայ հետախույզներին «առաջարկվում» է երեք օրում լքել քաղաքը, քանի որ նրանց փաստաթղթերում նշված է, որ իրենք համարվում են «գործողվածներ» և կանոնավոր բանակի զինծառայողները չեն (տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 56, թ. 39 շրջ.): Կար Կովկասյան I բանակային կորպուսի հրամանատար, գեներալ Պ. Պ. Կալիտինի հրամանը՝ արգելել հայերի մուտքը Էրզրում:

⁸⁹ Ռ. Օ. Ս ա հ ա կ յ ա ն. նշվ. հոդվ., էջ 49:

1916 թ. ապրիլի 5-ին՝ Տրապիզոնը գրավելուց հետո, ռուսները «բախվում» են մի հետաքրքիր փաստի. քաղաքում շարունակում էր գործել թուրքական նախկին քաղաքապետարանը: Ըստ ռուսական հակահետախուզության ունեցած տեղեկության՝ այն կազմավորել էր թուրքական իշխանությունը, կարելի է ենթադրել՝ հետախուզությունը, երբ լքում էր Տրապիզոնը⁹⁰: Եվ որպեսզի ռուսների մոտ կասկած չհարուցեն կառավարման մարմնի իրական նպատակները, նրա կազմում ընդգրկում են նաև տեղի հույն բնակչության ներկայացուցիչներին:

Ռուսական հրամանատարությունը Տրապիզոնն օգտագործում էր հակառակորդի ավամերձ շրջաններում դիվերսիոն-հետախուզական ջոկատներ ուղարկելու համար: 1916 թ. հոկտեմբերի 20-ին ռուսական ռազմանավերը Թերմեի գետաբերանում ափ են հանում 40 աշխարհագրային և 150 հայ կամավոր: Նրանց միացան ավելի վաղ այնտեղ բերված և տեղանքը հետախուզած հայ կամավորներ: Համատեղ ուժերով նրանք գրավում են ցորենով բեռնված 20 առագաստանավ և ցորենի պահեստներ Թերմե գյուղում: Առագաստանավերը բերվում են Տրապիզոն⁹¹:

1916 թ. մայիսի սկզբին կազակային պարեկախումբը Քդիի շրջանում «գերում» է թուրքական II բանակի օպերատիվ բաժանմունքի պետ, ազգությամբ չերքեզ մայորի: Վերջինս ստույգ տեղեկություններ է տալիս II բանակի կազմի և նախատեսվող հարձակման մասին: Դա հնարավորություն է տալիս ռուսական հրամանատարությանը համապատասխան միջոցներ ձեռնարկել և ջախջախել հակառակորդին⁹²:

Երզնկան և Բաբերդը գրավելուց հետո դրանք դառնում են ռուսական բանակային հետախուզության կենտրոններից: Ռուսական հետախուզությանը հատկապես հետաքրքրում էին Դերսիմի քրդերը, նրանց շրջանում եղած տրամադրությունները: Այդ նպատակով նրանց մոտ և ավելի հեռու վայրեր են ուղարկվում գործակալներ⁹³:

1916–1917 թթ. Երզնկայում և Բաբերդում հետախուզական գործունեություն է ծավալում Սերաստացի Մուրադը (Խրիսյան): Նրա գործակալները, որոնք թուրքերենին կամ քրդերենին ազատ տիրապետող հայեր և հույներ էին, ուղարկվում էին

⁹⁰ Skú Халит Дюндар Акарджа. Трабзон становится Трапезондом: Превращение османского города в русский во время Первой мировой войны. – Русский сборник. М., 2010, с. 97.– <http://ridr.ru/library/russkij-sbornik/52-russkij-sbornik-issledovanija-po-istorii-rossii-tom-viii.html>

⁹¹ Боевая летопись русского флота. М., 1948, с. 418; История Первой мировой войны 1914–1918, т. 2. М., 1965, с. 277–278. ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, Լեռնի անձնական ֆոնդ, ֆ. 1, ց. 1, գ. 225, թ. 12–13: Վկայակոչված փաստաթուղթը կազմվել է մարտական գործողությանը մասնակցի պատմածի հիման վրա:

⁹² Е. В. Масловский. Նշվ. աշխ., էջ 366–367: Տ. Դևոյանի հուշերի համաձայն, մայորը սովորական դասալիք չէր, ինչպես փորձում է ներկայացնել գեներալ Ե. Վ. Մալովսկին: Թուրքական բանակի ազգությամբ չերքեզ սպան ժամանակին հավաքագրվել է ռուսական հետախուզության կողմից: Մայորն առաջապահ դիրքերը «ուսումնասիրելու» պատրվակով գալիս է առաջավոր զիծ և անցնում է ռուսների կողմը՝ նրանց հաղորդելով արժեքավոր տեղեկություններ (տե՛ս Տ. Դևոյանի և Գ. Հետախույզի մը հուշերը. – «Վեկ», 1938, թիվ 3, էջ 60):

⁹³ ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 204, թ. 17:

քրդերի բնակության վայրերը: Մուրադը գործակալներ էր հավաքագրում նաև այն քրդերից, որոնք մշտապես բնակվում էին սովյալ շրջանում և բարեկամաբար էին տրամադրված հայերի նկատմամբ⁹⁴: Գեներալ Ն. Մ. Մորելի բնութագրմամբ, «Շնորհիվ Մուրադի եռանդին, երկրամասի և տեղի բնակչության բնավորության հիմնավոր իմանալուն և գործակալների հաջող ընտրությանը՝ Երզնկայից հետախուզությունը կատարվում էր բավականին հաջող: Ջոկատի շտաբը ժամանակին տեղեկացված էր թուրքերի և քրդերի կողմից նախապատրաստվող հարձակումների, նրանց ուժերի կենտրոնացման, տեղաշարժման և ուժերի մասին»⁹⁵:

Երզնկայից հետախուզական աշխատանքները կատարվում էին սպա Չախալյանի կողմից, որը նախկինում եղել էր Կովկասյան I բանակային կորպուսի հակահետախուզական բաժանմունքի աշխատակից: Նա ուներ երկու մշտական գործակալ ռեզիդենտ, որոնց գտնվելու վայրը Երզնկան էր: Նրանց էին ենթարկվում մի քանի շրջիկ գործակալներ, որոնք, տարբեր վայրեր շրջելով, հետախուզական տեղեկություններ էին հայթայթում: Գործակալներն ընտրվել էին այն մահմեդականներից՝ քրդերից և թուրքերից, որոնք բարեկամաբար էին տրամադրված հայերի նկատմամբ: Դա հնարավորություն էր տալիս ամենայն մանրամասնությամբ տեղեկանալ գրավված շրջանների թուրք բնակչության տրամադրությունների, նրանց սպառազինության, թուրքական բանակի հետ ունեցած շփումների, նախապատրաստվող ապստամբությունների ժամանակի և դրանցում ընդգրկված ուժերի թվաքանակի մասին⁹⁶: Ն. Մ. Մորելի վկայությունից երևում է, որ գործակալական մեծ ցանց ուներ նաև մեկ այլ սպա՝ Տեր-Վարդանյանը: Նա իր հետախուզական գործունեությունը քողարկում էր առևտրով: Դա հնարավորություն էր տալիս Տեր-Վարդանյանին ազատորեն շրջել Սարիղամիշ-Կարսի շրջանում: Նա ոչ միայն հետախուզական տեղեկություններ էր հայթայթում, այլև տեղական բնակչությունից հավաքագրում էր գործակալներ: Վերջիններս ուղարկվում էին ոչ միայն Սարիղամիշ-Կարսի, այլև ավելի հեռու շրջանները⁹⁷:

Ընդհանուր առմամբ, ռուսական բանակային հետախուզությունը չի կարողանում կատարել իր վրա դրված առաջադրանքը, քանի որ նրա ղեկավարության կողմից չէր դրսևորվում համապատասխան վճռականություն և հետևողականություն: Ն. Մ. Մորելի գնահատմամբ, առավել հաջող էր գործում Նոր Մելիմից 16 վերստ հեռավորության վրա գտնվող Թադուն գյուղում տեղակայված հայկական I հատուկ հեծելավաշտը⁹⁸: Բանակային հետախուզությունն առավել հարուստ տեղեկություններ էր հայթայթում գործակալային ցանցի շնորհիվ: Նոր Մելիմի շրջանում բնակվող հայերն ու հույները կամավոր կատարում էին հետախուզություն, քանի որ շրջանը մոտիկ էր գտնվում հակառակորդին և դրանով նրանք փորձում էին իրենց

⁹⁴ Նույն տեղում:

⁹⁵ Նույն տեղում, թ. 17 շրջ.:

⁹⁶ Նույն տեղում:

⁹⁷ ՀՄԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 204, թ. 53 և շրջ.:

⁹⁸ Նույն տեղում:

ապահովել թուրքերի հնարավոր հարձակումից և շահագրգռված էին զինվորական հետախուզության հետ համագործակցությամբ⁹⁹:

1917 թ. դեկտեմբերի 7-ի ռուսական բանակի հակահետախուզական բաժանմունքի գաղտնի հաղորդագրությունում հայտնվում է, որ, բրիտանացիներից ստացված տեղեկության համաձայն, գերմանացիները ռուս-թուրքական ռազմաճակատ են ուղարկել մի քանի անձանց՝ Ակխուրա բեյին, Ահմեդ բեյ օղլուն և Մ. Շերեթելուն¹⁰⁰:

Այսպիսով՝ Առաջին համաշխարհային պատերազմի և, մասնավորապես, ռուս-թուրքական ռազմաճակատում մղած մարտական գործողությունները թույլ են տալիս հանգել հետևյալ եզրակացություններին.

1. պատերազմը հստակ ցույց տվեց, որ մարտական անմիջական գործողությունների ժամանակ էլ ավելի է կարևորվում հետախուզության և հակահետախուզության դերը: Ի տարբերություն Արևելյան ռազմաճակատի, ռուս-թուրքականում առավել մեծ նշանակություն են ստանում մերձճակատային հետախուզական գործողությունները, որոնք հնարավորություն են տալիս անմիջականորեն տեղեկություններ ստանալ հակառակորդի վերաբերյալ:

2. Ռուս-թուրքական ռազմաճակատում պաշտպանական համատարած գոտիների բացակայությունը հնարավորություն է տալիս առանց որևէ դժվարության հակառակորդի թիկունքն ուղարկել ոչ միայն հետախուզական առանձին խմբեր, այլև ավելի զգալի ուժեր, ինչպես, Էրզրումի օպերացիայի նախօրյակին:

3. Լեռնային ռելիեֆը թույլ է տալիս իրականացնել շրջանցիկ զորաշարժեր, որոնց ճանապարհը վաղորդք հետախուզվում է բանակային հետախույզների կողմից: Դա հաճախ շփոթեցնում և ապակողմնորոշում է հակառակորդին՝ նրա մոտ պատրանք ստեղծելով, թե թշնամին մանրամասն տեղյակ է իր տեղակայման և ուժերի մասին:

4. Ինքնաթիռների տեխնիկապես անկատար լինելը, լեռնային կտրտված ռելիեֆը և տեղանքի բարձրությունը՝ երկուսից երեք հազար մետր, հնարավորություն չեն տալիս կատարել օդային լուսանկարահանում և հետախուզություն: Հավանաբար, ավելի նպատակահարմար կլինեի օդապարհիկների կիրառումը հետախուզական նպատակների համար:

5. Հետախուզությունը հատկապես կարևոր տեղեկություններ էր տալիս ձմռանը, երբ ձյան թանձր ծածկույթը հնարավորություն չէր տալիս սկսել հարձակողական լայնածավալ գործողություններ: Հաճախ հակառակորդը, հույս դնելով անանցանելի ձյան վրա, հարկ չէր համարում ուժեղացնել մարտական պահպանությունը, իսկ երբեմն էլ բնավ ժամապահներ չէր նշանակում:

6. Կար հետախուզական միասնական կենտրոնի ստեղծման անհրաժեշտություն, որը հնարավորություն կտար համադրել և վերլուծել ստացված տվյալները:

7. Ջորամասերում ունենալ զինձառայողներից ընտրված և լավ պատրաստված հետախուզական ստորաբաժանումներ:

⁹⁹ Նույն տեղում, թ. 53–54:

¹⁰⁰ Ռ. Օ. Մ ա հ ա կ յ ա ն. նշվ. հոդվ., էջ 51:

8. Մեծ տեղ հատկացնել ռազմավարական՝ խորքային հետախուզությանը: Օգտագործել չեզոք երկրներում գտնվող ոչ միայն զինվորական կցորդների, այլև դիվանագիտական մյուս աշխատակիցներից ստացված տարաբնույթ տեղեկատվությունը:

Անփոփելով, կարելի է հետևություն անել, որ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հետախուզության և հակահետախուզության բնագավառում առավել հաջող գործել են գերմանացիները և բրիտանացիները: Հատկապես զգալի հետախուզահետազոտողական աշխատանքներ են կատարում գերմանացիները: Նրանք ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրել էին Ռուսական կայսրության սոցիալ-տնտեսական, ազգային հակասությունները, ռուս և մյուս ազգությունների ազգային ու կրոնական առանձնահատկությունները: Ռուսաստանցի պատմաբան Բ. Բ. Գրեկովի բնորոշմամբ, գերմանացիներն իրենց ձեռքի տակ ունեին վերը նշված սոցիալ-քաղաքական, ազգային ու կրոնական լարվածությունների թեորետիկ քարտեզը: Դա հնարավորություն է տալիս 1915 թ. մինչև 1917 թ. ձեռնամուխ լինել Ռուսաստանի «հեղափոխականացմանը»¹⁰¹:

ИЗ ИСТОРИИ ДЕЯТЕЛЬНОСТИ РАЗВЕДЫВАТЕЛЬНЫХ СЛУЖБ НА РУССКО-ТУРЕЦКОМ ФРОНТЕ НАКАНУНЕ И ВО ВРЕМЯ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ (1914–1917 ГГ.)

РУБЕН СААКЯН

Резюме

Начиная с конца 1980-х годов политологи и историки стали больше внимания уделять истории Первой мировой войны. Но преобладали работы и статьи, в которых изучались Западный и Восточный фронты. Лишь немногочисленные историки должное внимание уделяли русско-турецкому фронту и деятельности разведывательных и контрразведывательных служб в период с 1914 по 1917 г. Архивные публикации, статьи и воспоминания участников боевых действий дают возможность осветить деятельность специальных служб на русско-турецком фронте. Накануне войны у русского командования была хорошо организованная агентурная сеть, однако после начала боевых действий связь с агентурой была прервана. Особенно сильная прифронтная и тыловая агентура была у турок. До войны турки, а также немцы смогли организовать хорошо законспирированную сеть агентов, в особенности среди мусульманского населения, широко используя панисламистскую и пантюркистскую агитацию. Это выявилось в первые дни войны, когда мусульманское население Карсской области и Батумской губернии подняло массовое восстание против русских войск и облегчило проникновение турецкой 3-й армии в глубь территории России. Немецкая разведка пыталась использовать русских и нерусских политических эмигрантов, чтобы «революционизировать» Россию, воздействовать морально-психологически на многонациональное общество империи, развалить боевой

¹⁰¹ Первая мировая война. Пролог XX века, с. 421.

дух русской армии и вывести ее из войны. Во время боевых действий разведывательные сведения для турецкого командования добывали разные курдские племена, которые сражались против русской армии. На русско-турецком фронте русскому командованию удалось провести ряд успешных операций благодаря сведениям, добытым разведкой. Контрразведке удалось произвести несколько успешных операций, которые помогли изболчить вражеских агентов. Один из примеров – Дильманская, Эрзерумская и другие операции.

FROM THE HISTORY OF RECONNAISSANCE SERVICE ACTIVITIES ON THE RUSSIAN-TURKISH FRONT ON THE EVE AND DURING THE FIRST WORLD WAR (1914–1917)

RUBEN SAHAKYAN

S u m m a r y

Since the end of the 1980s political scientists and historians have started giving more attention to the history of the First World War. However, the works and articles have mainly dealt with Western and Eastern Fronts. There have only been a few historians who have focused on the Russian-Turkish Front, as well as reconnaissance and counterespionage service activities in the period of 1914–1917. Archival publications, articles and memoirs of participants of military operations make it possible to more or less elucidate the secret service activities on the Russian-Turkish Front. On the eve of the war the Russian command had a well-organized spy network, but the connection with it was interrupted after the beginning of military operations. Turks had more efficient front-line and rear spy network. Before the war both Turks and Germans managed to organize a well-conspirated spy network, especially among the Muslim population, having widely used Pan-Islamic and Pan-Turkish propaganda for that purpose. It came in sight on the first days of the war, when the Muslim population of Kars region and Batumi province massively rose up against Russians and their troops, having facilitated the intrusion of the 3rd Turkish army deep into the territory of Russia. The German intelligence tried to use the Russian and non-Russian political immigrants, in order 'to revolutionize' Russia, to moral-psychically influence the multinational society of the Empire, destroying military spirit of the Russian army, and to eliminate it from the war. During the military operations the reconnaissance information for the Turkish command was gathered by various Kurd tribes who fought against the Russian army. A number of successful operations were carried out by the Russian command on the Russian-Turkish Front, due to the information gathered by reconnaissance service. The counterespionage service in its turn could unmask the spies of the enemy (e.g. Dilman or Erzerum operations).